

Գ. Զ. ԱՎԵԼԱՑԱՆ

ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

ՅԵԿ

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՑԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ

ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

631.8

Ա-74

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1940

631.8

Q-74

ՄՊ

Գ. Շ. ԱՎԵԼԱՆՅԱՆ

04 AUG 2010

ՊԱՐԱՐՏԱՆՑՈՒԹԵՐ
ՅԵՎ
ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ
ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

217

Z U S M E S Z R U S

ՅԵՐԵՎԱՆ

1940

15 FEB 2013

17.321

631.81 633.1

Ն Ե Բ Ա Ծ Ա Կ Ա Ն

Այս կամ այն կուլտուրական բույսի անհրաժեշտ ազբու-
տիւնիկական ձեռնարկութիւնի շաբթում պարարտացումը ճիշտ
կաղմակերպելու համար, չափաղանց կարևոր և իմանալ այդ
բույսի պահանջը տվյալ միջավայրում և վերջինիս ազգեցու-
թյունը նրա աճման, զարդացման ու բերքի կաղմակերպման
վրա: Մենք պետք և կարողանանք դեկավարել բույսի աճեցու-
ղությունն ու զարգացումը՝ կանոնավորել նրա սննդառության
պայմանները, հողը զարձնել ավելի բերքի, մի խորքով այնպես
դեկավարել փորպեսի բույսն իր բերքը կաղմակերպի ավելի
շատ և լավ փորակի:

Բույսին դեկավարելու գործում հայտնի են և լայն մասսայի
սեփականությունն են գարձել մեր Միության ականավոր գիտ-
ական՝ ակադեմիկ Տ. Դ. Լիսենկոյի աշխատանքները — ՅԱՐԱ-
ՎՀԱՅԱՑԻԱՆ, ՆԵՐՍՈՒՏՍԱՅԻՆ, ՏՐԱՄԱԽԱՉՈՒԽՄ, ԿԱՐՏՈՒՖԻԼԻ
ԱՄԱՌԱՅԻՆ ՑԱՆՔՍ և այլն: Հայտնի յեն նաև ակադեմիկ Վ.
Խ. Վիլյամսի բազմաթիվ աշխատանքները, վորով նա նշում և
հողի բերքիությունը բարձրացնելու արմատական միջոցը՝ ԽՈ-
ՏԱՅԱՆԱՅԻՆ ՑԱՆՔԱՇՐՋԱՉԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ:

Հողի լավ ստրուկտուրան բույսին հնարավորություն և
տալիս ավելի լավ յուրացնելու հողի լուծույթի մեջ գոնված
սննդանյութերը և մյուս կողմից ավելացնում և մատչելի սննդա-
րար նյութերի քանակը հողում:

Բազմաթիվ փորձերը ցույց են տալիս, վոր ստրուկտուրա
ունեցող հողում պարարտանյութն ավելի մեծ չափով և ավելաց-
նում բերքը: Վաս ստրուկտուրա ունեցող հողում, նաև՝ բույսերն
աճում են թույլ և յերկրորդ՝ այդ հողերում ցանկող կուլտու-
րաների տակ պարարտանյութ տալու գելքում բերքը չի ավե-
լանում այն չափով, ինչ չափով վոր այդ հույն քանակի պա-
րարտանյութը կավելացներ բերքը լավ ստրուկտուրա ունեցող
հողում:

Մեր խնդիրն և այս գրքույին մեջ բերել մի շաբթ կարեվոր
անդեկություններ պարարտանյութերի մասին և ապա կանգ
առնել հացահատիկային կուլտուրաների (ցորեն, գարի) պարա-

БІБЛІОТЕКА
Академії Наук
УРСР

Հ 268 Խ

Г. Ш. АСЛАНЯН

Удобрения и удобрение
хлебных злаков

Арменгиз. Ереван, 1940 թ.

(ՀԽՍՀ ՀԺԿ Հացահատիկային Վարչության
գաշտավարական կայան)



8 505-53

տացման վրա ընդհանրապես և Հայկական ԽՍՀ հողային և կլի-
մայական պայմաններում՝ մասնավորապես:

I. ԲՈՒՑՍԻ ՄՆՆԴԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Վազուց հայտնի յէ, վոր բույսի աճեցողության և զարգաց-
ման համար անհրաժեշտ հնա ջերմություն, լույս, ող, ջուր և
սննդարար նյութեր:

Բույսն իր արմատների շնորհիվ հողից կլանում և ջրի հետ
միասին նրանում լուծված սննդարար նյութերը, բացի զրանից
բույսն իր արմատներից արտադրած թույլ թթուների ոգնու-
թյամբ առտիճանաբար լուծում և հողի մեջ յեղած դժվարալուծ
աղերը և նրանց նույնական կլանում: Բայց այդ աղերից բույսը
շատ քիչ և սպառվում, դրանից բացի նրանք իրենց կազմությամբ
հաճախ չեն բավարարում բույսի սննդառության ամբողջ պա-
հանջը, վրաբինակ միջատ չե, վոր նրանում գտնվում են բույս
անհրաժեշտ սննդանյութերը՝ ցանկալի քանակությամբ ու հա-
րաբերությամբ:

Ուստի հողի ցածր բերքատվության պատճառներից մեկն
ել այն ե, վոր նրանում պակասում են բույսի սննդառության
համար անհրաժեշտ մեկ կամ մի քանի նյութեր:

Յերեմին հողում լինում են անհրաժեշտ բույս սննդանյու-
թերը, բայց դրանց կողքին հողի վորեն ուրիշ հատկությունը
բացառական ազդեցություն և թողնում բույսի լրիվ զարգաց-
ման և բերքատվության վրա: Այսպիսի հատկություններ են,
որինակ՝ հողի ավելորդ թթվությունը, աղերի մեծ տոկոսը (ա-
ռաջաներ), ջրի պակասությունը, մոլախոտերով վարակված լի-
նելը և այլն:

Հողում սննդանյութերի քանակը շատացնելու կամ բույսի
նորմալ սննդառությունը խանդարող վորեն հատկությունը վե-
րացնելու նպատակով զործածվող նյութերը կոչվում են պարա-
տանյութեր, իսկ այդ աշխատանքը՝ պարարտացում:

Բայց նրանից, վոր բույսը սնվում և արմատներով, նա
սնվում և նաև տերեներով, վերջիններս ողից կլանում են ած-
խաթթու զազը (ածխաթթու զազը ողի մեջ կազմում է 0,03 %):
Բույսերի տերենների ստորին յերեսի վրա կան բազմաթիվ ծա-
կառիկներ՝ հերձանցքներ, դրանց միջոցով բույսն ողի ածխա-
թթուն կլանում և, արմատներից ստացված ջրի և այլ նյութերի
հետ և լույսի ճառագայթների ազդեցության տակ տերենների

մեջ տեղի յեն ունենում մի շարք բարդ պրոցեսներ՝ ածխաթթվի
ածխածինն (C) սպազմործվում և բույսի կողմից — ոռլա, շա-
քարներ, թաղանթանյութ, ճարպեր, սպիտակուցներ և այլ որ-
դանական նյութեր կազմելու համար, իսկ թթվածինը (O₂)
վերապառնում և ողը:

Մյուս կողմից բույսի տերենների և ցողունների մեջ են
անցնում արմատների շնորհիվ հողից վերցրած նյութերը, գրանք
հետեւյալներն են՝ ջուր, աղոտ, ֆուֆոր, կալիում, կեր, մագ-
նիում, ծծումբ, սիլիցիում, յերկաթ, բոր, պղինձ, ալյումի-
նիում, նատրիում և մի շարք ուրիշ նյութեր: Այս բոլորն ել
բույսի մեջ են անցնում լուծված վիճակում: Տարբեր բույսերը
հողից տարբեր քանակով են վերցնում այդ անհրաժեշտ ելե-
մենտները:

Վերոհիշյալ բույր հիմնաներն ել հողում կան, սակայն
տարբեր քանակով, և յերկար ժամանակ այս կամ այն կուլտու-
րան նույն հողի վրա մշակելու հետեւյանքով հողն ազգատանում
և բույսին անհրաժեշտ սննդանյութերից, մանավանդ նրանց
դյուրամարս մասից: Սակայն կան կուլտուրաներ, վորոնք հողը
հարստացնում են աղոտով և լավացնում, նրա ֆիզիկական հատ-
կությունը՝ գրանք են՝ թիթեռնածաղիկալոր բույսերը, վորոնք
սակայն, մյուս բույսերի նման հողն ազգատացնում են կալիու-
մից, ֆուֆորից, կրից և այլն:

Ինչպես ասցինք, տարբեր կուլտուրաները տարբեր չա-
փով են հողից սննդանյութեր վերցնում և վորքան բերքը բարձր
և լինում, այնքան ել հողից շատ սննդանյութեր և հեռացվում:
Դա կարելի յէ տեսնել № 1 աղյուսակի ավյալներից: (Տես աղ-
յուսակ հաջորդ եջում):

Վորովինեակ ստախանովականների կողմից ստացված բերքը
մի քանի անգամ ավելի բարձր և քան սովորական բերքը, ուս-
տի այդ բերքի հետ հողից ավելի շատ սննդանյութ և գուրս
բերգում: Այդ պատճառով ել նման հողերում ցանվող կուլտու-
րաների պահանջը, հանգեց պարարտացումն, ավելի մեծ և լինում:

Ընդհանրապես բույսի տարբեր մասերում սննդանյութերը
տարբեր չափով են կուտակվում և մյուս կողմից սննդարար ալս
կամ այն նյութերի տոկոսը բույսի մեջ կախված և լինում
բույսի տեսակից, մշակության ձևից, կլիմայական և հողային
պայմաններից և այլն:

Ներքեվ բերքած մասերում սննդանյութերը
կուլտուրաների քիմիկական կազմությունը:

Աղյուսակ № 1
ՏԱՐԲԵՐ ԿՈՒՆՑՈՒՄԱՆԵՐԻ ԲԵՐՔԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՍՆՆԴԱՆՅՈՒԹԵՐԻ
ՔԱՆԱԿԸ ՀԵԿՏԱՐԻՑ

| Կուլտուրան | Բերքը ցենտներով հեկտարից | | Արտառ կդր. | Գոտի բարձրականություն կդր. | Կամաց կդր. | Կ կ ր կ դր. |
|----------------------|--------------------------|--------|------------|----------------------------|------------|-------------|
| | Համարկը | Ծղուար | | | | |
| Աշն. ցորեն | 25 | 60 | 81 | 37,0 | 75,0 | — |
| Գարն. ցորեն | 25 | 60 | 104 | 33,7 | 66,5 | 16,5 |
| Գարի | 25 | 60 | 66 | 29,3 | 53,7 | 21,3 |
| Կարսոնֆիլ | 150 | 120 | 84 | 41,0 | 192,0 | 105,0 |
| Շաք. ճակնդեղ | 300 | 200 | 120 | 54,0 | 175,0 | 52,0 |
| Կտավիատ | 10 | 40 | 62,8 | 30,1 | 48,8 | 12,7 |

Աղյուսակ № 2

| Կուլտուրան | Բացարձակ չոր նյութի մեջ տոկոսներով | | | | | |
|----------------------------|------------------------------------|---------|--|------------|-------------|----------|
| | Արդար | Մոլիբդ. | Գոտի բարձրականություն P ₂ O ₅ | Կամաց կդր. | Կ կ ր կ դր. | Մագնիսիտ |
| 1. Աշն. ցորեն հատիկ . . . | 1,16 | 1,73 | 0,85 | 0,50 | 0,05 | 0,15 |
| ծղուար | 0,45 | 4,86 | 0,20 | 0,90 | 0,28 | 0,11 |
| 2. Գարն. ցորեն հատիկ . . . | 2,05 | 2,32 | 0,85 | 0,60 | 0,05 | 0,22 |
| ծղուար | 0,56 | 3,48 | 0,20 | 0,75 | 0,26 | 0,09 |
| 3. Գարի հատիկ | 1,50 | 2,55 | 0,85 | 0,55 | 0,10 | 0,16 |
| ծղուար | 0,50 | 4,49 | 0,20 | 1,00 | 0,39 | 0,09 |
| 4. Վիճակ հատիկ | 4,40 | 2,66 | 0,99 | 0,80 | 0,22 | 0,24 |
| մուս | 1,40 | 4,43 | 0,27 | 0,63 | 0,56 | 0,37 |
| 5. Կորնդան խոտ | 2,27 | 4,57 | 0,68 | 1,00 | 1,63 | 0,46 |
| 6. Առվույտ խոտ | 2,6 | 6,29 | 0,65 | 1,50 | 2,52 | 0,31 |
| 7. Կտավիատ հատիկ | 3,80 | 3,27 | 1,35 | 1,00 | 0,26 | 0,47 |
| Յողուն | 0,62 | 9,03 | 0,42 | 0,97 | 0,69 | 0,20 |
| 8. Սիսեռ հատիկ | 3,65 | 2,63 | 1,00 | 1,25 | 0,03 | 0,13 |
| Կարման | 1,40 | 3,91 | 0,35 | 0,50 | 1,82 | 0,27 |

Ինչպես տեսնում ենք աղյուսակի տվյալներից, տարբեր կուլտուրաների սեղ ազոտի, փոփոքի և կալիումի $0,0\sim$ տարբեր եւ տարբեր եւ նույնպես մինչույն բույսի տարբեր մասերում: Թե հատիկի և թե ցողունի սեղ սննդարար նյութերի տոկոսը յենթարկվում է փոփոխման: Որինակ՝ Դյուզենդի շրջանում, Դյուզենդի գյուղի լնկ. «Յիկոյանի» անվան կոլխոզում (γ -բդ բրիգադում) 1938 թվին գարնան գարու հետ մեր կողմից դրված փորձից ստացվեց՝ չպարարտացված հողի մեջ հեկտարից 22 ցենտներ բերք, զորի հատիկի մեջ ազոտը կազմում եր $1,97\%$, իսկ աղյուսական փոսֆորական և կալիումական պարարտանյութերով պարարտացված հողաւասից ստացվեց 38 ցենտներ, զորի հատիկների մեջ աղոտը կազմում եր $2,16\%$ (փորձը դրված է յեղել ջրովի պայմաններում): Նման որինակներ բազմաթիվ են ինչպես տարբեր կիմյական, հողային պայմանների համար, նույնպես և մշակության տարբեր ձեվերի կեպքում:

Այսպիսով՝ ի նկատի ունենալով բույսի պահանջը հանդեպ ոննդանյութերը, և այն, զոր ամեն տարի բերքի հետ հեռացվում են զգալի քանակությամբ սննդանյութեր, այդ պատճառով եւ տարբեց-տարի ընկնում երեքրատվությունը: Հողի բերքատվությունը բարձրացնելու համար կիրառվում է ցանքաշարժանառություն և հողի մեջ են մտցվում բույսի համար անհրաժեշտ պարարտանյութեր՝ գոմազը, մոխիրը, թունազը ու բազմաթիվ տեսակի թափթփուկներ, փորոնք իրենց մեջ պարունակում են բույսերի համար անհրաժեշտ սնունդը: Բացի դրանից այժմ արդյունաբերության կողմից արտադրվում են արհեստական պարարտանյութեր, վորոնք պարունակում են զլիավորապես այն նյութերը, վորոնք կարիքը բույսն ավելի շատ ե զգում և հողում համեմատաբար քիչ են լինում — որինակ՝ աղոտ, փոփոք և կալիում:

Հանքա ին պարարտանյութերի արտադրությունը մեր սոցիալիստական յերկրի կարգերում տարբեց-տարի բարձրացվում է և կոլխոզները գործադրում են այդ նյութերն իրենց դաշտերի բերքատվությունն ել ավելի բարձրացնելու համար: Դրան հակառակ, կապիտալիստական յերկրներում հանքային պարարտանյութերի արտադրությունն ընկնում է:

Մեզ մոտ, մի կողմից հանքային պարարտանյութերի արտադրության անընդհատ աճը և անասնապահության զարգացումը, (զորը տալիս ե մեծ քանակի նաև պարարտա-

նյութ—գոմաղբ), իսկ մյուս կողմից ճիշտ ցանքսաշրջանառութեան անցնելը հնարավորություն են ստեղծում կայուն բերք ստանալու: Բերքի անընդհատ բարձրացման հնարավորությունները մեր յերկրում ստեղծված են: Կիրառելով ցանքսաշրջանառություն, մեքենայացում, պարարտացում, յարօվիպացիա, բարձր վորակի մշակում, լավ վորակի սերմ և այլն, հնարավորություն են տալիս ստանալու կայուն բարձր բերք, վորով կատարած կլինիք յերկրին տարեկան 8 միլիորդ փութ հացահատիկ տալու մասին մեր առաջնորդ ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ առաջադրանքը: Վերևում նշված միջոցառումների շարքում պարարտացումն ել առաջնակարգ տեղ ե զրագում, վորի ուսումնասիրությունն ու կյանքում կիրառելն ունի մեծ նշանակություն:

Այժմ անցնենք պարարտանյութերի ուսումնասիրությանը:

II. ՏԵՂԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԵՐ

Ա. ԳՈՄԱՂԲ

Գոմաղբը հանդիսանում է լրիվ պարարտանյութ. Նա լրիվ է կոչվում, վորովինեակ պարունակում և բույսերի համար անհրաժեշտ բաղմաթիվ սննդանութիւնը, որինակ՝ աղոտ, ֆոոփորական թթու, կալիի, ծծումբ, լոր, մագնեզի և այլն: Թոմաղբի առավելություններից մեկն ել կայանում է նրանում, վոր նա պարունակում է նաև մեծ քանակությամբ որդանական նյութ, վորը առա կարենոր և հողի ֆիզիկական հատկությունները լավացնելու, հողի մեջ խոնավությունն ավելի շատ և յերկար ժամանակ պահելու, բույսերին ցրտահարելուց պաշտպանելու գործում: Դիոմաղբի որգանական նյութերն աստիճանաբար քայլայվելով լույսի համար մատչելի սննդանյութեր են առաջանում, վորոնք և ուսուագործվում են մի քանի տարի: Գոմաղբի առավելություններից մեկն ել կալանում է նրանում, վոր նա ստացվում և բոլոր կոլխզներում: Գոմաղբի արժեքը վորպես պարարտանյութ կախված է նրան ինամքով պահելուց, ցամքարի տեսակից ու քանակից, անասունների կերպով, անասունների տեսակից և այլն:

Բ. ԳՈՄԱՂԲԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Տարբեր անասուններից ստացված արտաթորությունների կազմությունը լինում է տարբեր և բացի գրանից նա կախված է նաև կերպով: Վորքան կերը ջրալի յէ, այնքան արտաթորու-

թյունները լինում են ջրալի և նրանց մեջ աղոտի, ֆոոփորի կալիումի տոկոսը լինում է ցածր, և ընդհակառակը:

Ներքոնիշյալ աղյուսակում (№ 3) բերվում ե տարբեր անասունների և թուչունների արտաթորությունների քիմիական միջին կազմությունը:

Ալյուսակ № 3

ԹԱՐՄ ԱՐՏԱԹՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՏՈԿՈՍՆԵՐՈՎ

| Արտաթորություն | Ճ ու ր | Ռոբանկանի ն յ ո ւ թ | Ա պ | Կ ա լ | Կ ե ր | Մագնիւմ | Ֆոոփորի կ ա ն | Ն յ ո ւ թ |
|---------------------------|--------|------------------------|------|-------|-------|---------|------------------|-----------|
| 1. Թարմ թրիք ձիու . . | 75,7 | 24,3 | 0,44 | 0,35 | 0,15 | 0,12 | 0,85 | 0,06 |
| 2. » Խոզ յեղջ. անաս. 83,8 | 16,2 | 0,29 | 0,10 | 0,34 | 0,13 | 0,17 | 0,40 | |
| 3. » Վոչլաբի . . . | 65,5 | 34,5 | 0 | 0,15 | 0,46 | 0,15 | 0,31 | 0,14 |
| 4. » Խոզի . . . | 82,0 | 18,0 | 0,66 | 0,26 | 0,09 | 0,10 | 0,41 | 0,04 |
| 5. Թարմ մեղ ձիու . . | 90,1 | 9,9 | 1,15 | 1,50 | 0,45 | 0,24 | 0,00 | 0,06 |
| 6. » Խոզ յեղջ. անաս. 93,8 | 6,2 | 0,58 | 0,49 | 0,01 | 0,04 | 0,00 | 0,13 | |
| 7. » Վոչլաբի . . . | 87,2 | 12,8 | 1,95 | 2,27 | 0,16 | 0,34 | 0,01 | 0,30 |
| 8. Խոզի . . . | 96,7 | 3,3 | 0,43 | 0,83 | — | 0,08 | 0,07 | 0,08 |
| 9. Թարմ ձիուս բաղի . . | 56,6 | 26,2 | 1,00 | 0,62 | 1,72 | 0,35 | 1,40 | 0,25 |
| 10. » սազի . . | 77,1 | 19,4 | 0,55 | 0,95 | 0,84 | 0,20 | 0,54 | 0,14 |
| 11. » հալի . . | 56,0 | 25,5 | 1,63 | 0,85 | 2,40 | 0,74 | 1,54 | 0,45 |
| 12. » աղավնու . | 51,9 | 30,8 | 1,76 | 1,00 | 1,60 | 1,50 | 1,78 | 0,83 |

Թվերը ցույց են տալիս, վոր տարբեր անասունների աղբի կազմությունը տարբեր ե:

Լավ վորակի և մեծ քանակի գոմաղբ ստանալու համար ցամքարն ունի խոշոր նշանակություն: Լավ ցամքար համարվում է չոր տորֆը, գարմանը, ծառերի տերենները և այլն:

Ներքոնիշյալ աղյուսակում բերվում ե (աղ, № 4) տարբեր ցամքարի վրա թարմ գոմաղբի կազմությունը տռկոսներով:

Աղյուսակ № 4

ԹԱՐՄ ԳՈՄԱՂԲԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՏՈԿՈՍՆԵՐՈՎ

| | Գոմաղբ գարմանի ցամքարով | | | | հ | Գոմաղբ տոր- ֆիցամքարով | |
|---------------------------|----------------------------|------|----------|----------|------|---------------------------|----------|
| | համաղբ | զ | մասնական | մասնական | | զ | մասնական |
| 1. Զուր | 75,0 | 71,3 | 77,5 | 64,6 | 72,4 | 67,0 | 77,5 |
| 2. Որդանակ նյութեր | 21,0 | 25,4 | 20,3 | 31,8 | 25,0 | — | — |
| 3. Բնդիմանուր ազոտ | 0,50 | 0,58 | 0,45 | 0,83 | 0,45 | 0,80 | 0,60 |
| 4. Ֆոսֆորական թթու | 0,20 | 0,28 | 0,23 | 0,23 | 0,19 | 0,25 | 0,22 |
| 5. Կալի | 0,60 | 0,53 | 0,50 | 0,67 | 0,60 | 0,50 | 0,48 |
| 6. Կիր | 0,50 | 0,21 | 0,40 | 0,83 | 0,08 | 0,44 | 0,55 |
| 7. Մագնեզիում | 0,15 | — | — | — | — | — | — |
| 8. Ծծմբական թթու | 0,10 | — | — | — | — | — | — |
| 9. Քլոր | — | 0,04 | 0,10 | 0,17 | 0,17 | — | — |
| 10. Սիլիկաթթու | — | 1,77 | 0,85 | 1,47 | 1,08 | — | — |
| 11. Ցերկար և ալյումինիում | — | 0,11 | 0,05 | 0,04 | 0,07 | — | — |

Այս թվերն ուշադրությամբ դիտելուց հետո դժվար չեւ առելու վոր անասունի աղբն և ավելի արժեքավոր: Այս գոմաղբը վորի մեջ ազոտի, ֆոսֆորի, կալիումի և որդանական նյութերի տոկոսը բարձր է, նա ավելի արժեքավոր է: Գոմաղբը պահելու ժամանակ որդանական նյութերը պետք է անցնեն կիսափթած վիճակի, իսկ յեթե որդանական նյութերն առանց փթելու յեն մնացել, այսինքն յեթե թարմ գոմաղբ է, ապա նա առաջին տարում բերքատվության վրա դրական աղղեցություն չի թողնում:

Հետեւյալ աղյուսակում բերվում ե գոմաղբի կազմությունը, նրա տարրեր աստիճանի քայլքայլածության վիճակում:

| Գոմաղբի բաղադրիչ մասերը | Գործանի ցամքարով | | | Տորֆի ցամքարով |
|----------------------------|-----------------------------|--------------------------|---------------------|-------------------|
| | Գոմաղբը 3—4 ամիս հետո | Հասունացած զած գոմաղբ | Ուժեղ քայլքայլած | |
| 1. Զուր | 77,0 | 76,0 | 79,0 | 79,0 |
| 2. Որդանական նյութեր | 17,0 | 20,0 | 14,0 | 19,5 |
| 3. Բնդիմանուր ազոտ | 0,55 | 0,60 | 0,98 | 0,65 |
| 4. Բնդիմանուր ֆիու | 0,25 | 0,30 | 0,58 | 0,25 |
| 5. Բնդիմանուր կալի | 0,70 | 0,75 | 0,90 | 0,50 |
| 6. Կիր | 0,70 | 0,78 | 0,88 | 0,30 |
| 7. Մագնեզիում | 0,18 | 0,20 | 0,18 | — |
| 8. Ծծմբական թթու | 0,18 | 0,17 | 0,13 | — |
| 9. Քլոր | 0,19 | — | 0,16 | — |
| 10. Սիլիկաթթու | 1,68 | — | 1,72 | — |

Գոմաղբը չպետք է ուժեղ քայլքայլ, քանի վոր այդ դեպքում տեղի յեւ ունենում ազոտի և որդանական նյութերի մեծ կորուստ: Գոմաղբը պահպանելիս պետք է նրան հասցնել կիսափթայլքայլած վիճակի և ապա սկսագործել պարարտացման համար:

Գ. ԳՈՄԱՂԲԻ ՈԳՏԱԾՈՐԾՈՒՄԸ

Գոմաղբի պարարտացման արժեքը բարձրացնելու համար պետք է նրան հատուկ ձեմով պահել, անխնամ պահպան գոմաղբը կորցնում է իր վորակը և այդպիսի գոմաղբից չի կարելի սպասել այն, ինչ վոր մենք կոտանանք խնամքով պահպան գոմաղբից: Վատ ձեմով պահելու դեպքում գոմաղբի ամենաարժեքավոր մասերն, ինչպիսիք են՝ ազոտը, որդանական նյութերը, կալիումը ու ֆոսֆորը կորչում են մինչև 30—40% և ավելին: Այդ կորուստն ավելի յեւ մեծանում քամիների և անձեռփաջրի աղղեցության տակ, մանավանդ յերբ անխնամ ձեմով թափված գոմաղբն այրվում է և նրա գեմ վոչ մի միջոց ձեռք չի առնվում:

Դաշտ տեղափոխված թարմ գոմաղբը պետք է հողամասի ծայրում դնել մեծ կույտով, նախորդը կույտի տակն ամրացնել, գուել դարման՝ 30—40 սանտիմետր շերտով և նրա վրա մի կող-

մից շերտ առ շերտ դասավորել գոմաղբը (կույտի բարձրությունը 1,5—2 մետր): Կույտը լրանալուց հետո ծածկել հողերարակ շերտով և թողնել մինչև նա հասնի կիսաքայլայլած վիճուկի, նոր միայն հավասարաչափ փոել դաշտում և անմիջապես վարել:

Գոմաղբի այն մասը, վորը ձմռան ամիսներին չի տեղափոխում դաշտ, պետք է խնամքով դասավորել և պահպանել համաձայն հրահանգի:

Թարմ գոմաղբով պարարտացնել չի կարելի, քանի վոր թարմ գոմաղբով պարարտացնելու դեպքում բերքը փոխանակել պետք է, վորովհետև թարմ գոմաղբը շասնարուստ և միկրոբներով և թաղանթանյութերով. այդ միկրոբներն ոգտագործելով գոմաղբի թաղանթանյութերը վորպես հներգի ազդյուր, կապում են իրենց հետ վոչ միայն գոմաղբի միջ յեղած սննդանյութերն, այլ և հողի մատչելի աղոտի մհծ մասը: Այդ պատճառով ել թարմ գոմաղբով պարարտացնելն անթույլատրելի յե:

Գոմաղբը դաշտի կույտից կամ գոմի բակում պահպանված կույտից դաշտ տեղափոխելու ժամանակ պետք է պահպանել հետեւյալ հիմնական կանոնները:

ա) Կույտից գոմաղբը վերցնել այն հերթականությամբ՝ ինչ հերթականությամբ դրվել է կույտը: Գոմաղբը կտրել ուղղահայց՝ վերելից վար:

բ) Գոմաղբը դաշտ տեղափոխելուց հետո հավասարաչափ ցրել և անմիջապես վարել:

գ) Գոմաղբը դաշտում հավասարապես ցրելու համար պետք է դաշտը նշաններով բաժանել հավասար քառակուսիների:

Գոմաղբի նորման մեկ հեկտարի համար սահմանելիս պետք է յենել նրանից, թե տնտեսության մեջ վորքան գոմաղբ կառողային հատկություններից և բերքի պլանային առաջադրանքից:

Մանր յեղջուրավոր անառուններից և ձիերից ստացված աղբը տալ հեկտարին $10-12$ տոննայի հաշվով: Խոշոր յեղջուրավոր անառուններից ստացված գոմաղբը խորհուրդ և արվում առաջին հերթին տանը կավային և աղիացած հողերին, հեկտարին $20-25$ տոննայի հաշվով: Ինչպես ասացինք, նայած տեղի պայմաններին, գոմաղբի քանակին և առհասարակ հնարավորության գեղքում գոմաղբի գողան կարելի յե հասցնել հեկտարին մինչև 40 տոննայի:

Գոմաղբը պետք է տակ վարի տակ: Այն գեղքում, յերբ գոմաղբը լցնում են մեծ փոռերի մեջ, ջուրը վրայից թողնում է այդ ջրով տալիս սնուցում, տեղի յե ունենում գոմաղբի սննդանյութերի կորուստ և հարկ յեղած եֆեկտն այդ նույն քանակի գոմաղբից չի ստացվում: Ամառվա ամիսներում կուտակած գոմաղբը պետք է ոկտագործել աշնան վարի տակ:

Դ. ԳՈՄԱՂԲԻ ՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԻՄԸ

Պարարտացման պլանավորումը կազմակերպելու համար պետք է անպայման իմանալ, թե ավագալ տնտեսության մեջ վորքան գոմաղբ ե ստացվում: Գոմաղբի քանակը վորոշելու համար կան մի քանի մեթոդներ. բերենք այդ մեթոդներից գլխավորները:

1. ըստ Բուևենոպի—անառուններին տրվելիք կամ տրված կերի և ցամքարի գումարը բազմապատկվում և 2-ով.

$$\text{Գոմաղբի քանակը} = (\text{կեր} + \text{ցամքար}) \times 2.$$

2. ըստ Վոլֆի յենթաղբում և, վոր կերի չոր նյութերի կեսը մարսվում և անառունների կորմից, իսկ մյուս կեսն անցնում և գոմաղբին: Ուստի նա առաջարկում է չոր նյութերի կեսին գումարել ցամքարի քաշը և բազմապատկել 4-ով (ընդունելով վոր գոմաղբի 75% -ը չուր ե).

$$\text{Գոմաղբի քանակը} = \left(\frac{\text{կեր}}{2} + \text{ցամքար} \right) \times 4.$$

3. Գոմաղբի քանակը վորոշվում ենակ իր ծավալով: Զափվում է կույտի յերկարությունը, լայնությունը և բարձրությունը. այդ յերեք չափումները բազմապատկելով մեկը մյուսով, կ'ստացվի կույտի ծավալը: Որինակ յեթե կույտի յերկարությունը $= 10$ մետրի, լայնությունը $= 3$ մետրի, իսկ բարձրությունը 2 մետրի, ապա $10 \times 3 \times 2 = 60$ խոր. մետր գոմաղբի քաշը հետեւյան են:

ա) թարմ գոմաղբ (փուչփուչ դարսած) $= 400$ կգ.

բ) ամբարակած գոմաղբ $= 700$ »

գ) կիսաքայլայլած » $= 800$ »

դ) քայլքայլած » $= 900$ »

ԵԵ. ԳՈՄԱՂԲԻ ԱՂԲԱՀՅՈՒԹ (ԺԻԺԱ)

Գոմաղբի ժիժան ստացվում է այն ժամանակ, յերբ մեղն անցնում և գոմաղբի կույտի միջից, մեղը, նախ կլանվում և գոմաղբի կորմից և այնուհետև գուրս և զալիս կույտի տակից:

Ժիժան ազոտական և կալիումական լավ պարարտանյութ ե. նա շատ արագ և ազդում բռւյի աճեցողության վրա: Ժիժայի մեկ լիտրում պարունակվում է՝ 0,6-ից մինչև 4,0 գրամ ազոտ և 1,8-12,0 գրամ կալիում: Այս թվերը ցույց են տալիս, վոր ժիժան, վրայիս պարարտանյութ, շատ արժեքավոր ե, ուստի և նրան պետք ե հավաքել ու սպառդործել: Սովորաբար ժիժան հավաքում են գոմազբի կույտին կից այնպիս, վոր կույտի տակից հոսող ժիժան թափվում և մի փոսի մեջ, վորի պատերը և հաւաքը կավով կամ այլ անթափանցելի նյութով և պատված: Ժիժան կուսակվելուց հետո գարնան ամիսներին նրան հատուկ



Նկ. 1. Ժիժա ցրող մեքենա:

տակառներով դաշտ են տեղափոխում և սնուցում աշնանացանները, կամ թե տալիս են վարի տակ: Վաղ գարնանը ժիժայով աշնանացանները սնուցանելուց հետո պետք ե անմիջապես փոցինել և ջրել (ի հարկե յեթե ջրովի պայմաններում ե և արտը ջուր և պահանջում):

Վորպեսդի բույսերի վրա այլվածքներ չառաջանան, պետք ե ժիժան ջրով նոսրացնել 5-6 անգամ, ժիժայի եֆֆեկտիվությունն ավելի մեծացնելու համար լավ կլինի տալ նաև մեկ հեկտարին 1,5-2 ցենտներ սուպերֆոսֆատ. վերջինս չոր վե-

ճակում ցրում են դաշտում, այնուհետև մտցնում են ժիժան և հետո վարում կամ փոցիսում:

Շարքահերկ կուլտուրաների համար պետք ե ժիժան մտցնել միջարքային տարածությունները:

Ժիժան ցրելուց հետո պետք ե նրան անմիջապես ծածկել հողով, վորովհետև ամեն որվա ուշացումը գցում ե նրա եֆեկտիվությունը:

Այսպիս որինակ՝ փորձերը ցույց են տվել, վոր ժիժան ցրելուց հետո, յեթե անմիջապես ծածկվել ե և նրա ազդեցությունն ընդունել 100 %, ապա մեկ որից հետո ծածկածի եֆեկտը յեղել ե 92 %:

| | |
|---|--------------------------------------|
| 2 | որ հետո ծածկածի եֆֆեկտը յեղել ե 70 % |
| 3 | » » » » 43 % |
| 4 | » » » » 40 % |

Այս տվյալներն ասում են այն մասին, վոր ժիժան ցրելուց հետո պետք ե անմիջապես ծածկել հողով:

Միծ նշանակություն ունի նաև մտցնելու խորությունը. որինակ, յեթե հողի յերեսին ցրված առանց ծածկելու ժիժայի եֆֆեկտը ընդունել 100 %, ապա՝

| 5 սանտ. | խորությամբ մտցնելու դեպքում նրա եֆֆեկտը |
|---------|---|
| | յեղել ե 120 % |
| 10 | » » » » 189 % |
| 15 | » » » » 266 % |
| 25 | » » » » 295 % |

Պրակտիկայի պայմաններից յեղելով առանց դժվարության կարելի յե մտցնել 10-12 սանտիմետր խորության վրա, վորի հետեւկանքով նրա եֆֆեկտը կկրկնապատկվի՝ յերեսին շաղ տալու և բաց թողնելու համեմատությամբ:

Ժիժայի դոզան հաշվելու դեպքում պետք ե յելնել նրա մեջ գտնված ազոտի և կալիումի քանակից:

Յեթե ցանկանում ենք մեկ հեկտարին տալ 40 կգր. ազոտ, իսկ ժիժայի 1 լիտրում կա 4 գր. ազոտ, ապա պետք ե տալ 10 խոր. մետր ժիժա. իսկ յեթե ցանկանում ենք 60 կգր. ազոտ, պետք ե մտցնել 15 խոր. մետր ժիժա և այլն:

Ժիժայի կազմությունը շատ փոփոխական ե, բայց և այնպիս բերում ենք նրա միջին կազմությունը ցույց տվող մի աղյուսակ:

ԺԻԺԱՅԻ ՄԻՋԻՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Ժ ի ժ ա | Ռ է լ | Դ պ կ ա ն մ է լ ա ն ն յ ո ւ թ | Ա պ | Ց ո ս փ ո ւ ր ո ւ կ ա ն | Կ ա լ ի լ |
|--|-------|----------------------------------|-----|----------------------------|-----------|
| Ժիժայի մեկ լիտրում պարունակում են գրամ պարագաներով | 988 | 6 | 2,2 | 0,1 | 4,6 |

Բոլոր կուլտուրաների համար ժիշտան տալիս ե լավ եֆֆեկտ:

III. ԿՈՄՊՈՍ

Հաճախ անտեսության մեջ կուտակվում են զգալի քանակի թափթփուկներ՝ ինչպես բուսական, այնպես ել կենդանական: Վարպետի այդ մասցորդներն ոգտագործել վորպես պարարտանյութ, պետք ե նրանց համար ստեղծել այնպիսի պայմաններ, վեր նրանք քայլքայլին: Դրա համար կոմպոսի նյութը պետք ե դարսել կույտի ձեվով, մեկ մետր բարձրությամբ, տակը փռել 20—30 սանտիմետր դարմանի, տորֆի, կամ անպետք խոտի շերտ և վրան մեկ մետր բարձրությամբ դարսել այդ թափթփուկները: Վարպետի քայլքայլումը նորմալ ընթանա, կռւյտը պետք ե դարսել փուխիր (փուչ-փուչ):

Չոր յեղանակների ժամանակ, յերբ կույտը չորանում ե և քայլքայլումը կանոք և առնում, անհրաժեշտ ե խոնավացնել նրան ջրով կամ ժիշտայվ: Կոմպոսի պատրաստ ե լինում, յերբ նրա նյութերը լավ քայլքավել ե դարձել են փուխիր, համասեռ զանգված: Այդ լինում ե սովորաբար 4—6 ամիս հետո, իսկ յերբեմն նույնիսկ մեկ տարուց հետո միայն:

Յեթե կոմպոսի մեջ կան այնպիսի նյութեր, վարոնք դժվար են քայլքայլում, պետք ե կույտը 1—2 անգամ խառնել և նորից դարսել: Պատրաստի կոմպոսի գործ ե ածվում՝ այդինքում, բանջարանցային և հացահատիկային կուլտուրաների տակ մեկ հեկտարին 20—30 տոնի հաշվով: Կոմպոսի ազգեցությունը շարունակվում ե 1-ից 2 տարի:

IV. ՄՈԽԻՔ

Մոխիքի կազմության մեջ զլավորապես լինում են՝ կիր, կալիում, նատրիում, ֆոսֆորական թթու և մի շարք ուրիշ մոխրային նյութեր: Տարբեր բույսերից ստացված մոխիքը տարբեր կազմություն ունի: Տես ստորև բերված աղյուսակը:

Աղյուսակ № 6

| Մոխիք տեսակը | 0/0-ներով | | |
|----------------|-----------|--------------------|-------|
| | Կալիում | Ֆոսֆորական թթու | Կ ի ք |
| 1. Փայտի մոխիք | 10,0 | 4,0 | 30 |
| 2. Արելածաղկի | 15—40 | 4,0 | 7,0 |
| 3. Աթարի | 11,3 | 4,8 | 8,5 |
| 4. Տորֆի | 1,0—4,0 | 1,0—1,5 | 45—90 |
| 5. Քարածուխի | 0,2 | — | — |
| 6. Գուղափայ | 7,8 | 3,2 | — |

Ինչպես ցույց են տալիս թվերը, տարբեր մոխիքներն ունեն տարբեր կազմություն: Յերկում ե, վոր նրա զգալի մասը կազմված ե կրից ու կալիումից: Մոխիքը հանդիսանում է լավ պարարտանյութ համարյա բուր կուլտուրաների համար: Մոխիք առավելությունը կալիումական աղերի նկատմամբ կայանում է նրանում, վոր նրա մեջ քլոր գրեթե չկա, իսկ հայտնի յե, վոր քլորը բույսերի վրա, մանավանդ մեծ քանակության զեղքում, վատ ե ազդում: Մաքուր մոխիքը ունենալու դեպքում կարելի յե հեկտարին տալ 6—10 ցենտաներ—վարպետոնցուցում, իսկ յեթե մոխիքը հետ խառնված ե լինում այլ թափթփուկներ, այս գեղքում կարելի յե դոզան մեծացնել, նայած թե վոր տոկոսն ե կազմում մոխիքը խառնազի մեջ:

Մոխիքը սնուցում տալու դեպքում, ինչպես և բուր պարարտանյութերի դեպքում, աշխատել խորը մտցնել, փոցինել, յեթե պահանջվում ե նաև ջրեր: Մոխիքը չի կարելի պարարտացնել այն հողերը, վորոնք աղակալիված են:

Ինչպես վերելում տեսանք, բույսերն իրենց աճեցողության և զարգացման համար հողից վերցնում են մի շարք նյութեր: Ինկատի ունենալով, վոր բույսերը համեմատարար մեծ քանակությամբ ազդա, ֆոռֆորական թթու և կալիի են կլանում հողից, իսկ նրանց քանակն աստիճանաբար նվազելով բերքատվությունն ընկնում ե, ուստի պետք ե նորից վերադարձնել հողին այդ նյութերը: Այդ նպատակով ել արհեստական ձեմով արտադրվում ե ազոտական, ֆոռֆորական և կալիումական հանքային պարարտանյութեր, վորոնցով և պարարտացվում են հողերը: Այդ պարարտանյութերի ճշշտ ոգտագործումը մեծ չափով բարձրացնում ե գյուղատնտեսական կուտարաների բերքատվությունը: Հանքային պարարտանյութերի վոչ ճշշտ ոգտագործումը գցում ե պարարտանյութի եֆեկտը, բերքի քանակը և վորակը, և մյուս կողմից այդ արժեքավոր նյութերն անտեղի վատնվում ու շուայլվում են: Դրա համար ել պահանջվում ե, վոր յուրաքանչյուր իրմիթլարորատորիայի վարիչ, բրիգադիր և կոլխոզնիկ, վորոնք գործ ունեն հանքային և ընդհանրապես պարարտանյութերի հետ, կարողանան ճանաչել պարարտանյութերն, իմանալ նրանց հատկությունները, ավյալ կուտարայի պահանջը՝ յելնելով հողային ու կլիմայական պայմաններից և կազմակերպել պարարտացման գործը:

Հանքային պարարտանյութերը բաժանվում են 3 հիմնական խմբի:

1) Աղոտական—վորի հիմնական սննդանյութը հանդիսանում ե աղոտը:

2) Ֆոռֆորական—վորի հիմնական սննդանյութը հանդիսանում ե ֆոռֆորական թթուն:

3) Կալիումական—վորի հիմնական սննդանյութը հանդիսանում ե կալիումը:

Բացի այս միակողմանի, կամ ինչպես առում են հասարակ պարարտանյութերից, վորոնք հիմնականում մեկ սննդանյութ են պարունակում (աղոտ, ֆոռֆոր կամ կալիում), կան նաև բազմակողմանի կամ բարդ պարարտանյութեր, վորոնց կազմության մեջ մտնում են 2 կամ 3 սննդանյութեր:

Բազմակողմանի պարարտանյութերը կոչվում են խոռն կամ կոմբինացված, յերբ նրանք ստացվում են միակողմանի պարար-

տանյութերը մեկը մյուսի հետ խառնելուց, իսկ յերբ այդ բազմակողմանի պարարտանյութն ստացվում ե քիմիական ճանապարհով, կոչվում ե բարդ պարարտանյութ:

Կոմբինացված և բարդ պարարտանյութի մեջ մտնում են 2 կամ 3 սննդանյութ որինակ՝ աղոտ—ֆոռֆոր, աղոտ—կալիում կամ աղոտ—ֆոռֆոր—կալիում: Բարդ պարարտանյութերի առավելությունը կայանում ե նրանում, վոր նրանց մեջ այսպիս կոչված բալաստային նյութերի քանակը քիչ ե, սննդարար նյութերի տոկոսը բարձր, ուստի հարկ կլինի քիչ բեռ տեղափոխել: Իսկ դա մեծ նշանակություն ունի, յերբ պահանջվում ե տեղափոխում կատարել հեռու տարածությունների վրա:

1. ԱԶՈՏԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

Բոլոր բույսերը, բացառությամբ թիթեռնածաղկավորների, իրենց աղոտային սննդանդը վերցնում են հողից: Չնայած, վոր թիթեռնածաղկավոր բույսերը նույնպես կարող են յուրացնել հողի աղոտը, սակայն նրանք աղոտի մեծ մասը վերցնում են ոդից՝ պարարտաբակտիրիաների ոգնությամբ:

Թե հացահատիկային և թե մյուս կուտարաները սնվում են հողի աղոտի այն մասով, վորը զանվում և նիտրատային կամ ամմոնիակային վիճակում, յերկու միացություններով ել բույսը սնվում է: Հողում, միկրոբների և մի շարք ֆակտորների ազդեցության տակ, ամմոնիակը վեր և ածվում աղոտական թթվի, կամ, ինչպես առում են, վեր և ածվում նիտրատների: Բերքի հետ հեռացված աղոտի մի մասը գոմաղբի ձեվով վերադարձվում է հողին: Ինչպես ասացինք, գոմաղբի աղոտի մեծ մասը գտնվում է որդանական միացությունների ձեվով: Վերջինս միկրոօրգանիզմների գործունեության շնորհիվ վեր և ածվում նիտրատների, սիտրատներն ի տարբերություն ֆոռֆորական թթվի և կալիումի շատ քիչ և թույլ ձեվով են կլանվում հողի կողմից և ուժեղ մթնոլորտային տեղումներից կամ առատ ջրելու հետեվանքով նրանց զգալի մասը վլացվում է: Իսկ յերբ աղոտը գտնվում է ամմոնիակի ձեվով, այս գեղեցումը լվացվում է վոչ մի վտանգ չի ներկայացնում, քանի վոր ամմոնիակը լավ կլանվում է հողի մասնիկների կողմից: Սակայն պետք ե ասել, վոր ամմոնիակը կարծ ժամանակամիջոցում վեր և ածվում նիտրատների:

Արարատյան գալատավայրում, վորտեղ հողի լուծույթը թույլ հիմքային ե, կը ի տոկոսը բավականին բարձր ե (այդպիսի հողերը կոչվում են կարբոնատային), չերմությունն ամառվա ա-

միաներին բարձր ե, մթնոլորտային տեղումները՝ քիչ, այդ պայմաններում միկրոռդանիզմների գործունեյությունն ուժեղ է լինում և նիտրոֆիկացիան կատարվում ե արագ, այսինքն ամմոնիակն արագությամբ վեր ե ածվում նիտրատների: Ստեփանավանի, Կալինինոյի, Ամասիայի պայմաններում, վորտեղ հողն ունի թույլ թթվային սեակցիա և մթնոլորտային տեղումները լինում են շատ, նիտրոֆիկացիայի պրոցեսը համեմատաբար դանդաղ ե կատարվում:

Նիտրատներն անձրեվների և ջրելու ազդեցության տակ ավելի շատ են լվացվում ավագային հողից, քան թե սելվահողից կամ կավային հողից:

Հողը նիտրատային պարարտանյութերով պարարտացնելու ժամանակ այս հանդամանքը պետք ե նկատի ունենալ:

Հանքային պարարտանյութերը (ազոտական) մտցվում են հողը սովորաբար վարի տակ՝ նախ քան ցանքսը. նրանք տրվում են նաև ցանքսից հետո: Ցանքսից հետո արված պարարտացումը կոչվում է ՄՆՈՒՅՑՈՒՄ: Մնուցում ե տրվում ինչպես մյուս կուլտուրաներին, այնպես ել հացահատիկային կուլտուրաներին: Մնուցում տալու ամենահիմնական պայմաններից մեկն ել այն ե, վարպեսզի արված նյութը լուծվի և հասնի բուլսի արմատային սիստեմին, ուստի և ամեն մի սնուցման ժամանակ պետք ե ի նկատի ունենալ այդ կարեվոր հանդամանքները:

Մնուցում տալու ժամանակ պետք ե նկատի ունենալ հողի ջրով ապահոված լինելը, անջրդի պայմաններում պետք ե սնուցումը տալ վաղ գարնանը, իսկ յեթե մթնոլորտային տեղումները շատ են, կարելի յե տալ նաև թփակալման սկզբին: Հողը վատ մշակելու դեպքում ընդհանրապես պարարտացման ազդեցությունը չնչին ե լինում և տեղի լի ունենում ազոտի կորուստ: Բացի դրանից պարարտացումից մոլախոտերն ուժեղ զարգանում են և դրանով իսկ խանգարում կուլտուրական բույսի նորման սննդառությունը և աճումը: Վատ մշակման դեպքում հողը փուխր չի լինում, վորի հետեւ վատ վառքով հողի մեջ յեղած ազոտը վեր և ածվում գաղանման վիճակի և ցնդում և ողը:

Ազոտավ հողն աղքատանում ե նաև այն ժամանակ, յերբ կիրառվում ե միակողմանի հացահատիկային մշակություն առանց ցանքաշրջանառության և խոտաբույսեր մշակելու:

Հայկական ԽՍՀ հողային գրեթե բոլոր պայմաններում ազոտավ պարարտացնելիս բոլոր կուլտուրաների բերքը դդալ չափով ավելանում ե:

Ինչպես ցույց են տալիս նախկին քիմիացման և ագրոնոգագիտական կայանի փորձերի արդյունքները, հացահատիկային կուլտուրաների բերքը միջին հաշվով ավելանում և 30—50% առավելում է միայն ազոտական պարարտանյութ՝ ցիանամիեղ կալցիտում, կամ ամմոնիում ոռուֆատի ձեզով: Այդ իսկ պատճառով պահանջվում ե, վորպեսզի հողերը պարարտացվեն, ազոտավ, վորի համար անհրաժեշտ ոգտագործել առաջին հերթին գոմազը, ժիժան, մեղը, թուչնաղբը և ապա հանքային պարարտանյութեր: Սեվահողերն ընդհանրապես հարուստ են աղոտով: Հայկական ԽՍՀ շրջաններից որինակ՝ Ստեփանավանի, Կալինինոյի, Լենինականի, Ղուկասյանի, Կարմիրի և այլ շրջանների հողերը, չնայած նրան, վոր բավականաչափ հարուստ են աղոտով՝ 0,2—0,25%, այնուամենայնիվ ազոտական պարարտանյութ մտցնելու դեպքում նկատվում ե բերքի բարձրացում, մանավանդ, յերբ ազոտի հետ տրվում ե նաև փոսֆորական և կալիումական պարարտանյութեր:

Ինչով բացատրել այդ յերեվույթը, պետք ե ասել, վոր այդպիսի հողերի ազոտի մեծ մասը գտնվում է որդանական նյութերի ձեզով, վորոնցից բույսն անմիջապես չի մնջում: Այդորդանական միացությունները պետք ե քայլացվեն, վերածվեն միներալական (անորդանական) վիճակի, վորից հետո միայն նրանցից բույսն ողավել կարողանա: Իսկ այդ հողերում որդանական նյութերը, շնորհիվ կլիմայական պայմանների, շատ դանդաղ են քայլացվում:

Հողում ազոտի պակաս զգացվելու դեպքում բույսերի տերեւկների գույնը լինում է գեղնավուն, բաց կանաչ, աճեցողությունը և թփակալումը՝ թույլ, հասկերը՝ փոքր, սպիտակուցների տոկոսը հատիկների մեջ քիչ:

Ազոտի միակողմանի ավելցուկը հողում նույնպես անցանկալի յե, քանի վոր դրանից բույսի հասունացումն ուշանում ե, մանավանդ հացահատիկային կուլտուրաների մոտ, վորոնք չափից դուրս ուժեղ թփակալում են, շուտ պառկում, վորից պակասում և հատիկի յելքը: Իսկ յեթե աշնանից պարարտացվում ե միայն մեծ քանակի ազոտական պարարտանյութերով, այս դեպքում աշնանացան ավելի շուտ և յենթակա ցըսահարման: Աշնանացաններն աշնանից ազոտական պարարտանյութերով պարարտացնելիս պետք ե տալ նաև փոսֆորական ու կալիումական պարարտանյութեր (կամ մոխիր), փոսֆորական և կա-

լիումական պարարտանյութերը մեծացնում են բույսի ցրտա-
դիմացկունությունը:

Եյժմ անցնենք աղոտական պարարտանյութերի նկարա-
գրությանը:

1) Նատրիումական սելիտրան (NaNO_3) մանր բյուրեղային
նյութ է: Ջրում ամբողջապես լուծվում է, իր մեջ պարունակում
ե 15—16% ազոտ (N), բույսի վրա ազդում ե արագությամբ, հո-
ղից հեշտությամբ լվացվում է, մանավանդ ավագային հողերում:
Աշնանացան ցորեններին կարելի յետալ 1—3 անգամ (մեկ ան-
գամ աշնանը և 1—2 անգամ սնուցում գարնանը և ամառը):
Նատրիոնական սելիտրայով աշնանացանի տակ մացնելու ժա-
մանակ ցանկալի յետալ նաև ֆոսֆոր և կալիում: Նատրիոնա-
կան սելիտրան պակասեցնում է հողի թթվությունը:

2) Ամմոնիում սուլֆատը ($(\text{NH}_4)_2\text{SO}_4$) պարունակում է
19—20% ազոտ (N) ամմոնիակային պարարտանյութ է, ջրում
ամբողջապես լուծվում է, մանր բյուրեղային աղ է, նրա ամմո-
նիակը լավ կլանվում է հողի մասնիկների կողմից: Ամմոնիակն
անմիջապես ծառայում է բույսի համար վրապես սնունդ:

Ամմոնիակը միենալին ժամանակ հողում առաջիձանարար
վեր և ածվում նիտրատների: Աշնանացանների համար ամմո-
նիում սուլֆատ մացվում է հողն աշնան վարի տակ, իսկ գար-
նան կարելի յետանով տալ նաև սնուցում: Սնուցման համար
ավելի գերազանելի յետ ամմոնիում նիտրատը, քան թե ամմո-
նիում սուլֆատը: Յեթե տնտեսության մեջ կա այդ յերկու ձեզի
պարարտանյութերն ել, ապա պետք է ամմոնիում սուլֆատը
մացնել վարի տակ, իսկ ամմոնիում նիտրատը գործածել սնուց-
ման համար:

Ամմոնիում սուլֆատը փեղիուղիապես թթու պարարտա-
նյութ է, այսինքն բույսերի կողմից ավելի շատ ովտագործվում
է նրա ամմոնիակը, իսկ ծծմբական թթուն աղատվում է, վորը
լուծելի յետ դարձնում հողի մեջ յեղած ֆոսֆորական դժվարա-
լուծ միացությունները:

Թույլ թթվային հողերում ամմոնիում սուլֆատի գործա-
ծությունն առանձին վտանգ չի ներկայացնում, նույնիսկ յեթե
յերկար տարիներ գործածվելու լինի:

Հայաստանի հողերի մեծ մասը կրային է, իսկ այդպիսի
հողերում ամմոնիում սուլֆատի գործածությունն ավելի նպա-
տակահարմար է, քանի վոր նաև, լինելով փեղիուղիապես թթու
պարարտանյութ, մասնակի չափով հողի ֆոսֆատները վեր և
ածում բույսի համար դյուրամարս վիճակի: (Ամմոնիում սուլ-

ֆատի առավելությունը Հայաստանի կարբոնատային հողերի
համար ապացուցել են նախկին քիմիացման կայանի և ներկա-
յումս Դաշտավարական գիտահետազոտական կայանի գիտ. աշ-
խատող ընկերությունը):

3) Ամմոնիակային սելիտրան ((NH_4NO_3)) պարունակում է
33—35% ազոտ, նաև ամմոնիակային և նիտրատային պարար-
տանյութ է, լավ լուծվում է ջրում, խոնավ յեղանակներին կամ
խոնավ պահեստում խոնավանում է (խոնավություն է կլանում),
այնուեւեավ փոքր չափով չորանալուց հետո կոշտանում է: Հողը
մտցնելուց առաջ պետք է անպայման մանրացնել: Մանրացումը
պետք է կատարել փայտե թակերով, յերկաթե թակերով նրան
մանրացնել չի կարելի, վորովհետեւ կարող ե գրանից պայմանի—
և դժբախտառթյուն պատճառել:

Ամմոնիում սելիտրայի կոշտանալու հատկությունը դըժ-
վարացնում է նրա գործածությունը: Այդ պատճառով ել ամմո-
նիում սելիտրան պետք է պահել չոր պահեստաներում: Ամմոնիում
սելիտրան կարելի յետ գործածել՝ ինչպես հիմնական պարարտաց-
ման, այնպիս ել սնուցման համար:

Գարնանացաններին, աշնանացաններին, և առհասարակ վոչ
շարքահերկ կուլտուրաններին ամմոնիում նիտրատով սնուցում
տալու ժամանակ պետք է շատ լավ մանրացնել նրան և դաշ-
տում ցրել կեսորից հետո, յերբ բույսերի տերեկների վրա ջրի
կաթիլներ չկան. այդ դեպքում առաջիկա անձրեվի կամ ջրելուց
հետո նա իր գրական ազգեցությունը ցույց կտա բույսի աճե-
ցողության վրա:

Ամմոնիում սելիտրան բույսի հողային պայմաններում կա-
րելի յետ գործածել:

4) Կալցիում ցիանամիդ (կիրազոտ) CaCN_2 -ը իր մեջ պա-
րունակում է 17—21% ազոտ և 20—28% կիր, նաև սելի և և
ուժեղ փոշիանում է: Կալցիում ցիանամիդը կլանում է խոնա-
վություն և խոնավ վիճակում յերկար մնալու հետեւվանքով նրա
մեջ առաջանում է բույսի համար մնանակար միացություններ՝
գեցիանդիամիտ: Հետեւ բար, ցիանամիդը պետք է պահպանել
չոր պահեստում, հատուկ պարկերում: Ցիանամիդն ողից կլանում
է նաև ածխաթթու գաղ, վորը միանալով կրի հետ տալիս և
ածխաթթվային կիր, վորի հետեւվանքով ծավալը մեծանում է,
պարկերը ճեղքվում պատռվում են: Այդ պատճառով նրան
կարելի յետ պահել կույտի ձեղով, սակայն պետք է ծածկել ծղոտով:

Յիանամիդը բաց պահելու հետևվանքով նրա ազոտի մեծաք նույնական կարող է ցնդել որը, սակայն քիչ չափով միայն, իսկ յերկար ժամանակ պահելու հետեւվանքով ազոտի կորուստն զգալի յեղանում: Յիանամիդի փոշին մարդու և կենդանիների համար մնապակար ե: Աշխատանքի ժամանակ պետք է չփոշին ացնել, հագնել ակնոցներ, քիթը և բերանը կապել թաշկինակով, կամ լավ և ունենալ հատուկ դիմակ (մասկա): Յիանամիդի հետաշխատելու ժամանակ չի թույլատրվում գործածել ալկոհոլ՝ գինի, կոնյակ, զարեջուր և այլն:

Յիանամիդը մացգում և հողը՝ ցանքոից 7-ից 10 որ առաջ: Յիանամիդ կալցիումով դրված փորձերը ցույց են տալիս, վոր նա բոլոր կուլտուրաների համար իր եփեկանիվությամբ հետ չի մնում ոռուֆատ ամմունիումից: Միջին հաշվով Հայաստանի պայմաններում 60 կգ ազոտից հացահատիկային կուլտուրաների բերքն ավելանում է 35—50%: Նրա արդյունքն ավելի մեծ և լինում հացահատիկային կուլտուրաների համար փոփորի և կալիի հետ միասին:

5) Լեյնա սելիտրան կամ մոնտան սելիտրան պարունակում և մինչև 26% ազոտ և նա հանդիսանում է վորպես ամմոնիում ոռուֆատի և ամմոնիումի սելիտրայի խառնուրդ: Ազոտի մի մասը գտնվում է ամմոնիակի, իսկ մյուս մասը՝ սելիտրայի և նիտրատների ձեւով: Լեյնա սելիտրան համարվում է լավ պարտանյութ բոլոր կուլտուրաների համար, մանավանդ՝ խաղողի այդիների համար:

2. ՑՈՍՑՈՐԾԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

Հողի մեջ փոփորի քանակն ազոտի համեմատությամբ շատ անդամ ավելի քիչ է, բացի գրանից նրա մեծ մասը գտնվում է դժվար լուծվող վիճակում: Ընդհանուր փոփորական թթվի քանակը հողում լինում է 0,05—0,25%: Բույսի մեջ նա կուտակվում է զլիսավորապես հատիկներում: Փոփորով պարտացներու պահանջն ավելի սրբում է, յերբ այդ հողն պարտացված է լինում ազոտական և կալիումական պարարտանյութերով: Փոփորական պարարտանյութերը կարծացնում են հացահատիկային կուլտուրաների (և մյուսների) հասունացման տեսքությունը, բույսերին դարձնում են ավելի ցրտադիմացկուն, հատիկները լինում են ավելի մեծ, բարձրացնում են բերքի գորակը: Վերջին տարիներում դրված փորձերը ցույց են տալիս,

վոր չնայած Արարատյան դաշտավայրի հողերը հարուստ են ֆոսֆորով, սակայն այդ հողերը նույնիսկ միայն ֆոսֆորական պարարտանյութերով պարարտացների (60 կգ փոփորից) հացահատիկային կուլտուրաների բերքն ավելանում է հեկտարին 1½—2 ցենտներով: Ֆոսֆատները շատ լավ են ազդում նույնպես խոտերի, ճակնդեղի և կարտոֆիլի բերքատվության վրա: Ֆոսֆորական պարարտանյութերի հետ միասին սովորաբար տալիս են նաև ազոտական: Այս գեղը ուն պետք է հաշվի առնել նախորդ կուլտուրան: Ցեթե նա յեղել և թիթեռնաձաղկավոր, ապա աղոտ տալու կարիք չկա, այլ բավական կլինի տալ փոսփատ և կալիումական պարարտանյութ:

1) Փոսփորիսի այսուը ստացվում է փոփորիտի հանքից հանված հումույթի աղումով: Ֆոսփորիտի հանքերով մեր յերկիրն ամենահարուստն է: Ֆոսփորիտի ալյուրի մեջ փոփորական թթվի քանակը համում է 15—28%: Ֆոսփորիտի ալյուրի գույնը տարբեր է լինում՝ բաց մոխրավուն, մուգ, շագանակագույն և համարյա ու գույնի: Ֆոսփորիտի ալյուրը ջրում շատ չնչին չափով է լուծվում, լավ լուծվում է թթուներում, ուստի փոփորիտի ալյուրն առաջին հեռթին գործ է ածվում թթու հողերում: Վորովհետեւ նա ջրում շատ չնչին չափով է լուծվում, ուստի նրա դոզան սուպերֆոսֆատի նկատմամբ վերցվում է 2—3 անգամ ավելի: Որինակ՝ յեթե հացահատիկային կուլտուրաների տակ տրվում է 3—4 ցենտներ սուպերֆոսֆատ, ապա փոփորիտի ալյուր պետք է մացնել 8-ից 9 ցենտներ մեկ հեկտարին, ինարկե հաշվի առնելով փոփորական թթվի տոկուր:

2) Սուպերֆոսֆատը ստացվում է փոփորիտից. Փոսփորիտը գործարանում վերամշակվում է ծծմբական թթվով և ստացվում է սուպերֆոսֆատ՝ 14—18% փոփորական թթու պարունակող, վորը և բույսի համար մատչելի յե: Սուպերֆոսֆատը պարունակում է զգալի չափով նաև գիպս (CaSO_4): Սուպերֆոսֆատը արտաքուստ բաց մոխրավուն է: Հողը մացվում է աշնանացների և գարնանացների համար վարի տակ, նաև գործ է ածվում սնուցման կարգով: Սուպերֆոսֆատն ողում խռնավանում է և տալիս է կոշտեր, վորի պատճառով ել հողը մացնելուց առաջ պահանջվում է լավ մանրացներ Սուպերֆոսֆատը քայլացնում է պարկերը (մեղոկները), ուստի լավ և նրան պահել կույտի ձեւով տախտակամած հատակի վրա, իսկ կույտը ծածկել ծղոտով: Արդյունաբերության կողմից արտադրվում է

նաև կրիմակի սուպերֆոսֆատ, վորն իր մեջ պարունակում է 43—46 տոկոս ֆոսֆորական թթու: Կրիմակի սուպերֆոսֆատն իր ազդեցությամբ հետ չի մնում հառարակ սուպերֆոսֆատից:

3) Պրեցիալիտատը պարունակում է 30—38% ֆոսֆորական թթու, ջրում քիչ ե լուծվում, քան թե սուպերֆոսֆատը, բայց լավ լուծվում ե թույլ թթուներում. շատ դեպքերում հողում յեղած թույլ թթվությունը և բույսերի արմատներից արտադրած թթուները նրան լավ են լուծում: Նա այդ պատճառով ել լավ պարարտանյութ ե, գրեթե բոլոր հողերի և բոլոր կուլտուրաների համար:

4) Վոսկրի ալյուր. — Կենդանիների վոսկորները մեծ քանակությամբ ֆոսֆորական թթու յեն պարունակում, վորը հասնում է 25—30% ի. հում, անմշակ վոսկորը չի մանրանում և չափազանց դանդաղ ե աղդում բույսի աճեցողության վրա:

Հում վոսկորը ճարպա և սոսնձահար են անում, այնուհետև աղում. ստացված ալյուրի մեջ լինում ե մինչև 30% ֆոսֆորական թթու, և մոտ 1% աղու:

Վոսկրի ալյուրը լավ ե հողը մտցնել թթու պարարտանյութերի հետ միասին. որինակ՝ ամմոնիում սուլֆատի հետ:

Խորհուրդ ե տրվում գարնանացանների տակ մտցնել աշնանից, իսկ աշնանացանների տակ՝ ցելի մեջ:

3. ԿԱԼԻՌԻՄԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՑՈՒԹԵՐ

Կալիումի գգալի մասը բույսի մեջ կուտակվում ե տերեվներում և ցողուններում, այժմնքը՝ բույսի այն մասերում, վորոնք մնում են անտեսությունում և այս կամ այն ձևով վերագրածվում են հողին. որինակ՝ մոխրի, գոմաղրի և զանազան թափթփուկների ձևով: Կալիումը գոմաղրի մեջ, համեմատած ֆոսֆատի և աղոտի հետ, շատ ե: Կալիումի տոկոսը հողերում նույնական աղոտի և ֆոսֆորի համեմատությամբ շատ ե. որինակ՝ կենինականի շաբանակագույն սեվահողերում կալիումի 0% ը տատանվում է 2—2,2% ի սահմաններում, Արարատյան դաշտավայրի հողերում՝ 2,0—3,0% ե կազմում, Ստեփանավանի շրջանի հողերում՝ 1,5—2% և այլն: Կալիումի բարձր տոկոսը հողում դեռևս չի առում այն մասին, վոր այդ հողը կալիումական պարարտանյութերի կարիք չի զգում. որինակ՝ մոխրը, վորը պարունակում է 8—15% կալիում, շատ լավ աղդում և շատ հողերում մի շարք կուլտուրաների վրա: Յեթե հողը պա-

րարտացվում ե աղոտական և ֆոսֆորական պարարտանյութերով, ապա կալիումի կարիքը զգացվում է, իսկ միայն կալիումական պարարտանյութ մատյելիո եֆեկտը չնշին ե լինում կամ բուրովին չի լինում, իսկ յերբեմն ել բացասական ե լինում: Որգանական նյութերով հարուստ հողերում և ավագային հողերում կալիումը զգալիորեն բարձր եֆեկտ և տալիս:

Կալիումի եֆեկտը մեծ ե լինում կարտոֆիլի, ճակնդեղի, և խոտաբույսերի կուլտուրաները պարարտացնելու դեպքում, յերբ կալիումի հետ տրվում ե նաև աղոտ ու ֆոսֆոր:

Կալիումը բարձրացնում ե հացահատիկային կուլտուրաների ցրտադիմացկունությունը, թփակալումը և վերջապես՝ բերքը: Մինչև 1938 թ. Հայկական ԽՍՀ-ում գոյություն ուներ այն կարծիքը, վոր իրը մեր հողերը կալիումով հարուստ են, ուստի և կալիումական պարարտանյութերով չպետք ե պարարտացնել նրանց. այդ պատճառով ել կալիական պարարտանյութերի վրա, թե փորձնական և թե մասսայական կիրառման գործում հարկ յեղած ուշադրություն չեր դարձվում: Նախկինում կատարված փորձերում կալիումական պարարտանյութերի փորձերը ցույց ելին տալիս հակասական տվյալներ:

Նախկին քիմիացման և ագրոհողագիտական կայանը (Ներկայումս — գաշտավարական կայանի ագրոքիմիական բաժին) 1938 թ. գրեց մի շարք փորձեր՝ պարզելու համար նաև կալիումի աղցեցությունը գարու, ցորենի, ճակնդեղի, կարտոֆիլի, խաղողի և բամբակենու վրա: Բոլոր այդ փորձերն ել, վորոնք գրվել ելին տարրեր հողային պայմաններում, տվյալներ պարզունք և գրանով ցրեցին այն կարծիքը, թե իրը կալիական պարարտանյութերը մեզ մոտ բերքը չեն բարձրացնում: Նույնպես հետաքրքիր են գյուղատնտեսական ինստիտուտի ագրոքիմիական ամբիոնի վարիչ Ընկ. Յունիվերսիտետի փորձերը՝ ինստիտուտի տնտեսությունում (Յերևանին մոտիկ): Այդ փորձերից յերելում ե, վորը կալիումը աղոտական և ֆոսֆորական պարարտանյութերի ֆոնի վրա, զգալի չափով (մինչև 7 ցենտներ) բարձրացնում ե աշնանացան ցորենի բերքը:

Այսպիսով կալիումի գործածումն նաև մեր հողային պայմաններում զանազան կուլտուրաների տակ, արժանի յեւ հատուկ ուշադրության: Անհրաժեշտ ե շարունակել փորձնական աշխատանքները կալիումական պարարտանյութերի գործադրության վերաբերյալ: Պետք ե պարզել այն հողատիպերը, վորոնց կալի-

ումական պարարտանյութ տալը բարձրացնում ե բերքը: Պետք ե ասել, վոր մի շարք կալիումիական պարարտանյութեր կարելի յե հող մացնել թե աշնանից և թե պարնանից՝ վարի տակ: Երանք ոգտագործվում են նաև ոնուցում տալու համար: Ամենագործածական կալիումական պարարտանյութերը հետեւալներն են:

1). Սիլվինիտ, ստացվում ե Ռերալում գտնված Սոլիկամսկի հանքերից: Սոլիկամսկի հանքերը համարվում են կալիումի ամենամեծ հանքերը լիրկրադնդում: Այդ հանքերը հայտնաբերվել և շահագործման մեջ են դրված միայն Խորհրդային իշխանության որոք:

Սիլվինիտը պարունակում է 12—15% կալիի, նա վարդագույն ե կամ գորշ շագանակագույն, ջրում լուծվում ե լավ: Սիլվինիտի մեջ կա նաև սոլվորական աղ (NaCl), վորի ներկայությունն իջեցնում ե սիլվինիտի արժեքը, մանավանդ ծխախոտի և կարտոֆիլի համար: Մի շարք բույսեր, ինչպիսիք են կերի և շաքարի ճակնդեղը, կտավհատը լավ են աճում սիլվինիտով պարարտացրած հողերում: Սիլվինիտի մեջ յեղած սոլվորական աղը վատացնում ե հողի փիզիկական հատկությունը, այն ե՝ փոշիացնում ե և առաջացնում կեղեկ, մանավանդ յերբ մի շարք տարիներ սիլվինիտով ե պարարտացվում:

2). Կալիումիական աղը ստացվում ե սիլվինիտի վերամշակումից, վորի ժամանակ կերակրի աղը (NaCl) հեռացվում է: Այդպիսով ստացված կալիումական աղի մեջ կալիի տոկոսը բարձրացվում մինչև 30—40—50%, նայած կալիումական աղի մեջ քանի տոկոս ելինում կալիումը, ըստ այնմ ելնա ստանում ե համապատասխան անուն: որինակ՝ յեթե նրա մեջ կալիի տոկոսը լինում է 40—առում ենք 40%՝ կալիումական աղ և այն: Կալիումական աղը նույնպես խոնավություն ե կլանում, կոշտեր առաջացնում: Ուստի հողը մտցնելուց առաջ պետք ե մանրացնել: Կալիումական աղը պետք ե պահենաներում:

VI. ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Վատ պահպանված պարարտանյութը կորցնում ե իր արժեքի զգալի մասը: Պետք ե հիշել, վոր բարձր բերք ստանալու համար պահանջվում ե, վոր գործածվող պարարտանյութերը պահպանվեն մեծ խնամքով: Նախ և առաջ պարարտանյութերը կայարանից կոլանաենություն տեղափոխելու համար պետք

ե սայլերը, փուրգոնները և ավտոները հարմարեցնել այնպես, վոր ճանապարհին չթափվի: Պարարտանյութերը տրանսպորտին բարձելուց հետո պետք ե նրան ծածկել բրեզենտով կամ մի այլ ծածկոցով:

Պարարտանյութերը պետք ե պահել չոր պահեստում, պահեստը պետք ե տախտակամած լինի: Տարբեր տեսակի պարարտանյութերը պետք ե պահեստում պահել առանձին-առանձին և յուրաքանչյուր տեսակ պարարտանյութի անունը գրել և կպցնել համապատասխան պարարտանյութի բաժնում հարմար տեղ: Նախքան պահեստից դաշտ տանելը, կարելի յե խառնել իրար հետ մի քանի պարարտանյութերը: սակայն թե ինչ պարարտանյութերը և յերբ կարելի ե խառնել — մենք այդ մասին մանրամասն կանդ կառնենք քիչ հետո: Մինչև խառնելու ձեզերին անցնելն անհրաժեշտ ե, վոր ծանոթանանք այդ պարարտանյութերը ճանաչելու յեղանակներին, վորի համար ել մենք կբերենք պարարտանյութեր ճանաչելու համար նրանց մի քանի հատկանիշները:

VII. ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՃԱՆԱՉԵԼԻ

Պարարտանյութերի ճիշտ ոգտագործման առաջին նախապայմանը նրան ճանաչելն է: Գյուղատնտեսը կամ փորձված կոլոնտեսականն արտաքին տեսքից կարող ե պարարտանյութը ճանաչել, սակայն միշտ չի հաջողվում: Պահանջվում ե, վոր նրան ճիշտ ճանաչելու համար մի քանի հասարակ փորձ կատարվի, վորի համար անհրաժեշտ են քիմիական մի շարք լուծույթները: Այդ լուծույթներն են՝

1) Հիմքի լուծույթը, (որ կծու նատրիումի), վորը կարելի յե վերցնել դպրոցներից, դեղատներից կամ այլ լաբորատորիաներից: Հիմքի լուծույթի փոխարեն կարելի յե ոգտվել նաև լավ մոխրաջրից, վորի համար անձրեվաջրում կարելի յե խառնել մոխրերը, Փիլտրել (քամել) և լուծույթը վերցնել:

2) Քացախաթթու, եռաենցիխ, կամ թե քացախաթթուն (5—10%):

3) Աղոտաթթվական արծաթ (լյապիխ) — այս նյութը կարելի յե վերցնել ամեն մի դեղատնից (3% լուծույթ):

4) Քլորական բարիում, վորից պատրաստել լուծույթ՝

2—5 գր լուծել կեռ բաժակ ջրի (թորած կամ անձրեվաջրի) մեջ: Նույն ձևով պատրաստում են նաև լյապիխ լուծույթը:

ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹ ԵՐԻ ՃԱՆԱԳԵ

ԼՈՒՆԵԱՆՆԵՐԸ ՅԵՎ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| № | Պարարտանյութի անունը | Ազդող 0/0-% | Քույզնը | Կասուցվածքը |
|---|--|---|--|--|
| 1 | Ամմոնիում սուլֆատ $(\text{NH}_4)_2\text{SO}_4$ | 20—21 | Սպիտակ (յերեխմն գունավորված և թույլ կապույտ) | Բյուրեղային փոշի |
| 2 | Ամմոնիակային սելիտրա (կամ աղոստիթիվական ամմոնիում NH_4NO_3) | 33—35 | Սպիտակ (յեթե գունավորված և ապա դեղին) | Սեղանի աղի նման և |
| 3 | Ցիանամիդ կալցիում CaCN_2 | 17—21 | սեղ | Թեթև փոշի յե, հոտը նման և նավթայուղի կամ նավթի |
| 4 | Աերնա սելիտրա $\text{NH}_4\text{NO}_3 + (\text{NH}_4)_2\text{SO}_4$ | 25—26 | Մոխրագույն | Սեղանի աղի նման և |
| 5 | Ամոֆոս և դիամոֆոս | 11—22 ^{0/0} N 52—60 ^{0/0} P_2O_5 | Սպիտակ մոխրագույն | Չոր փոշիամ նման և |
| 6 | Մուպերֆոսֆատ | 14—18 | Բաց մոխրագույն կամ յերեխմն դեղնավուն | Լինում և փոքրիկ փուխր գնդերի ձեղով |
| 7 | Պրեցիտիտատ CaHPO_4 | 32—40 | Սպիտակ | Մանր փոշի յե |
| 8 | Սիլիկատ | 12—18 | Վարդագույն կամ կարմրաշագանակագույն, յերեխմն մոխրագուն կամ կանաչավուն | Խոշոր կառուներով աղի |
| 9 | Կալիումական աղ | 40 ^{0/0} -ի | Սպիտակ | |

| Լուծելիում-բյունը ջրում | Շիկացած ածուխի վրա փոփոխություն | Պարարտանյութերից վերցրած համուշը լուծել ջրում և կատարել հատուկ ստուգում |
|---|---|--|
| Լավ լուծվում է առանց մնացորդի | Առաջանաւմ է սպիտակ ծուխ, նաշաղիքի, սպիրուտի հոտ և զալիս | Այս պարարտանյութերի վրա բարիում քլոր ավելացնելու դեպքում առաջանաւ համուշը և սպիտակ կաշվանման նստվածք |
| Նույնը | Հեշտությամբ բոցավալվում է | Հիմք ավելացնելուց և տաքացնելուց նաշաղիքի հոտ և զալիս |
| Չի լուծվում | — | — |
| Լավ լուծվում է առանց մնացորդի | Հեշտությամբ բոցավալվում է | Լուծույթի վրա բարիում քլոր ավելացնելու դեպքում առաջանաւ և սպիտակ փաշիանման նստվածք |
| » | Առաջ է զալիս սպիտակ ծուխ, նաշաղիքի հոտ և զալիս | Լուծույթին լյազիս ավելացնելուց առաջ և զալիս դեղին առատ նստվածք |
| Լուծվում է քիչ, լուծույթը ստացվում է պղտորագուն | Նույն հոտն ունի | Լուծույթին մանրացած կավիճ ավելացնելու դեպքում առաջանաւ և փրփուր |
| Չի լուծվում | Գորշանում է թույլ և այնուհետեւ սեղանում է | Լուծույթին լյազիս ավելացնելուց վերին չերան իսկույն գունավորվում է մուգ դեղին գույնի |
| Չըսում լուծվում է առանց մնացորդի | Ճրճրթում է, աղի մանր կառուներ թողնում | Լուծույթին լյազիս ավելացնելիս առաջ և զալիս սպիտակ նստվածք: |
| Լուծվում հ | » | » |

5) Մի կտոր փայտի ածուխ և

6) մի քանի փորձանոթեր Այս բոլոր նյութերն եւ պկաք
և ձեռք բերել խրճիթ լաբորատորիայի համար: Այս նյութերի
ոգնությամբ վորոշվում եւ անհայտ պարարտանյութը: Ներքեզ
բերված աղյուսակում տրվում է նրանց հատկությունները և
աննդանյութի $\frac{0}{0}$ -ը:

Կատարելով աղյուսակի մեջ ցույց տրված աշխատանքները,
կարելի յեւ վորոշել տվյալ անհայտ պարարտանյութը: Իսկ յեթե
պարարտանյութի սննդարար նյութի՝ պղոտի, ֆուֆորի՝ կամ
կալիումի $\frac{0}{0}$ -ը կամկածելի յեւ, այս դեպքում պետք եւ ուղարկել
քիմիական լաբորատորիա անալիզի յենթարկելու համար:

Մինչև խառնուրդ պատրաստելը պետք եւ վորոշել, թե վոր-
քան աղոտ, ֆուֆորական թթու կամ կալիի պետք եւ մտցնել
տվյալ կուլտուրայի տակ: Հաշվելը շատ հեշտ է: որինակ՝ յեթե
ցանկանում ենք հեկտարին տալ 60 կգ մաքուր աղոտ՝ ամմո-
նիում սուլֆատի ձեվով, պետք եւ իմանալ աղոտի տոկուր
նրանում, իսկ աղյուսակի մեջ տոկոսը ցույց եւ տրված, հավասար
եւ 20% -ի: հաշվումը կատարել հետևյալ ձեվով՝

$$100 : 20 = x : 60:$$

$$x = \frac{100 \cdot 60}{20} = 300 \text{ կգ ամմոնիում սուլֆատ:}$$

Ուրեմն հեկտարին պետք է տալ 300 կգ ամմոնիում սուլֆատ,
վորն իր մեջ կ'պարունակի 60 կգ մաքուր աղոտ: Պարա-
րտանյութի քանակը վորոշելու համար—ցանկացած քանակության
մաքուր աղոտը, ֆուֆորը կամ կալիումը բազմապատկել 100-ով և
ստացված թիվը բաժանել սննդանյութի տոկոսի վրա: Այս ձե-
վով կարելի յեւ հաշվել բոլոր պարարտանյութերի պահանջվող
քանակները:

VIII. ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻՑ ԽԱՌՆՈՒԹՅԴ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Ինչպես ասվեց, նախ քան պարարտանյութերից խառնուրդ
պատրաստելը, պետք է պարարտանյութերը ճանաչել, իմանալ
աննդանյութերի $\frac{0}{0}$ -ը, իմանալ թե հեկտարին վորքան պետք եւ
տալ աղոտ, ֆուֆոր, կալիում և միշտ իմանալ պարարտացելիքը
տարածությունն ու կուլտուրան:

Խառնելու ժամանակ պետք է առաջնորդվել ստորև բերված
աղյուսակով, համապատասխան հրահանգով, կամ թե դյուզա-

տնատեսի ցուցմունքներով, քանի վոր կան պարարտանյութերը
վորոնց իրավ խառնելու դեպքում տեղի կունենա սննդանյութերի
կորուստ, կամ թե սննդարար նյութերը կարող են վերածվել
բույսի համար դժվար յօւրացվող միացությունների: Ստորեվ
բերվում եւ աղյուսակ, վորը ցույց եւ տալիս, թե վոր պարարտա-
նյութերը կարելի յեւ խառնել և վորոնք՝ չի կարելի:

Վերոհիշյալ սխեման շատ պարզ է և նրանից հետությամբ
կարելի յեւ ոգտվել: Որինակ՝ պահանջվում է հողը մտցնել յերկու
պարարտանյութ—ցիանամիզ կալցի և սուլֆերֆուֆատ: Նայում
ենք աղյուսակի վերեվում գրված—ցիանամիզը և աղյուսակի
կողքից սուլֆերֆուֆատը: Նրանց հանդիպման քառակուսին սեղ
եւ, ուրեմն չի կարելի խառնել, այլ պետք եւ մտցնել առանձին-
տուանձին:

Սուլֆատ ամմոնիումի և սուլֆերֆուֆատի հանդիպման քա-
ռակուսին գեցված եւ, ուրեմն կարելի յեւ խառնել:

Յերրորդ գեպքն այն է, յերբ քառակուսին սպիտակ ե-
ղա նշանակում է կարելի յեւ նախորոք խառնել: որինակ՝ ամմո-
նիում սուլֆատը և սուլփերֆուֆատը: Յերեք պարարտանյութը
միմյանց հետ խառնելիս պետք ի նկատի ունենալ յերկուսի
խառնելու հարավորությունը և ապա՝ յերրորդը: Որինակ, պա-
հանջվում է խառնել 3 պարարտանյութ՝ սուլֆատ ամմոնիում,
սուլփերֆուֆատ և որի վիճնիտ: Սխեման ցույց է տալիս, վոր սուլ-
ֆատ ամմոնիումը և սուլփերֆուֆատը կարելի յեւ խառնել: Սու-
լփերֆուֆատը սիլվինիտի հետ կարելի յեւ խառնել, նույնպես
կարելի է խառնել սուլֆատ ամմոնիումը և սիլվինիտը, ուրեմն
այս յերեք պարարտանյութերը կարելի մեկը մյուսի հետ խառ-
նել (բայց յերկար չպահել և 2 որից հետո անպայման մտցնել
հող), կավ և խառնելու որը պարարտացնել: Մինչև խառնուրդը
պատրաստեն անհրաժեշտ և վորոշել, թե վոր կուլտուրաների
տակ պետք է տալ նրան, վորոշել առանձին պարարտանյութերի
նորման և պարարտացվելիք արածությունը: Պարարտանյութեր-
ի նախ քան խառնելը պետք է նրանց լավ մանրացնել և կշռել—
աչքի չափով չի կարելի վերցնել: Խառնուրդը պետք է շատ լավ
պատրաստել կոշտեր բուրութին չպետք եւ թողնել և պետք է
ստացվի միատեսակ մասսա: Պարարտանյութերի խառնելը պետք
է կատարել տախտակով հատակած տղում, կամ այնպիսի տեղ,
վորտեղ պարարտանյութի կորուստ չլինի:



Վատ խառնած պարարտանյութեր գործադրելիս, զաշտում՝ չույսերի միջազն ուժեղ կաձի, իսկ մյուս մասը՝ թույլ և զաշտը կլինի խայտարղեա: Այն պարարտանյութերը վորոնք տալիս են վասակար փոշի պետք են նրանցից զգույշ լինել: Որինակ ցիւանամիդ կալցիումը գործադրելիս պետք են ունենալ պաշտպանող ակնոցներ, քիթը և բերանը կապել թաշկինսակով:

1) Նախազգուշացման միջոցներ պարարտանյութերի հետ աշխատելու ժամանակ:

ա) Ցիանամիդ կալցիումի, սուպերֆոսֆատի, վոսկրի ալրի հետ աշխատելու ժամանակ առաջանում են կծու փոշի, վորը գրգռում են աչքի կոպերը: Չեռքերով աչքերը տրորել չեն կարուի:

բ) Սուպերֆոսֆատը, սկլիտրան, ցիանամիդ կալցիումը և կալիումական աղը յերկար ժամանակ ձեռքի հետ շփելու զեպքում գրգռում են մաշկը: Այլպիսի պարարտանյութերի հետ աշխատելիս պետք են հագնել ձեռնոցներ և ընդմիջումին ձեռքերը լվանալ:

գ) Սուպերֆոսֆատը, մանավանդ յերբ նա խոնավ են, քայքայում են հագուստը և կաշե կոշիկը, Սուպերֆոսֆատի հետ յերկար ժամանակ աշխատելիս, պետք են հագնել ուստինե կոշիկներ:

դ) Սուպերֆոսֆատի պահեստների դրները պետք են հաճախ բացել ողափոխելու համար (հեռացնել ծծմբային գաղերը):

յե) Փոշիացող պարարտանյութերի հետ աշխատելիս, մանավանդ քամիների ժամանակ, պետք են հագնել ակնոցներ և պարարտացման աշխատանքները կատարել քամու ուղղությամբ:

զ) Անասուններին չի կարելի թույլ տալ լիվելու պարարտանյութերը, վորովհետեւ այդ կարող են նրանց հիվանդացնել:

IX. ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒՆՑՈՒՐԱՆԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ինչպիս առացինք, հանքային և տեղական պարարտանյութերի գործածությունը նակայական չափով բարձրացնում են բերքատվությունը: Տեղական և հանքային պարարտանյութերով հացահատիկային և այլ կուլտուրաները պարարտացնելու գեպում, պետք են մշակությունը տանել և ավելի լավ, զաշտը միանգամայն ազատ պետք են պահել մոլախոտերից, վարը կատարել վորակով, ջրել ժամանակին, իսկ վոր ամենակարենի են իմանալ կուլտուրայի պահանջը, հողը, նախորդ կուլտուրան և ալլն: Որինակ յեթե նախորդ կուլտուրան յեղել են թիթեռնածաղկավոր-առվուտ,

յերեքնուկ, կորնգան, վիկա կամ թիթեռնածաղկավորների և հաց գլուխ պատկանող խոտերի խառնուրդ, ապա այս զեպքում ցանգով հացահատիկային կուլտուրային կարիք չկա աղոտական պարարտանյութ տալու, քանի վոր նախորդ կուլտուրայի շնորհիվ հողն արգել հարստացած են լինում ազոտով:

Այս զեպքում պետք են մտցնել ցորենի տակ ֆոսֆորական և կալիումիսական պարարտանյութեր միայն:

Աշնանացանների դեպքում ֆոսֆորի ու կալիումի գոզայի լավ կլինի տալ աշնանից՝ անպայման վարի տակ, իսկ մնացած $\frac{3}{4}$ մնուցման ձեվով՝ գարնան: Աշնանացանների մնուցումը լավ ե տալ գարնան փոցխեց առաջ: Զրովի պայմաններում մնուցում տալուց հետո պետք ե անպայման ջրել, հետագայում մնուցում տալը պետք ե հարմարեցնել բույսի աճեցողության հետ, այսինքն, յեթե նկատվում ե, վոր բույսերը թույլ են աճում, պետք ե տալ մնուցում:

Գարնանացան կուլտուրանների տակ պարարտանյութ տալը պետք ե կապել նախորդ կուլտուրայի հետ որինակ, յեթե նախորդը շարքահերկ կամ խոտարույս ե յեղել, ըստայնմ վորոշվում և տրվելիք պարարտանյութերի տեսակը և նրանց քանակը՝ նույն մոտեցմամբ, ինչ վոր առվեց վերեվում աշնանացանի համար: Նույնպես պետք ե նկատի ունենալ, թե այդ հողերն անցյալ տարում ինչ չափով են պարարտացվել՝ հանքային և տեղական պարարտանյութերով: Հանքային պարարտանյութերից հեշտ լուծվողներն ավելի լավ են ազդում առաջին և յերկրորդ տարում, իսկ մյուս պարարտանյութերը, ինչպիսին ե գոմաղում և մյուս որգանական պարարտանյութերը, նրանց ազդեցությունը մի քանի տարի ե շարունակվում: Նախկին քիմիացման և ագրոնոգայիտական կայանը Հայաստանի պայմաններում կատարել ե բազմաթիվ փորձեր՝ տարբեր շրջաններում հացահատիկային կուլտուրանների հետ:

Այդ փորձերում աղոտական պարարտանյութերը յեղել են մեծ մասմբ ցիանամիդ կալցիում և ամմոնիում ուղղված իսկ վորով տրվել և հասարակ սուպերֆոսֆատի ձեռվությունը բերված աղյուսակ № 7):

Բալոր փորձերն ել ցույց են տվել, վոր հանքային նյութերով պարարտացման զեպքում տեղի յե ունենում զգալի չափով պարարտացման պարարտանյութ բարձրացում, այդ փորձերից բերենք մի քանիսի արդյունքները:

| Համար | Շրջանը | Քյուղը | Բերքը մեկ հեկտարից ցենտներով | | | | Կուլտուրա |
|-------|-----------|-----------------|---------------------------------|-------|-------|------------------------|-----------|
| | | | Առանց պարագաների | Աղբա | Ֆունը | Աղբան փոփոխությունը | |
| 1 | Մարտունի | Մարտունի . . . | 8,80 | 9,43 | 12,36 | 19,25 | գ. ցորեն |
| 2 | — | Թուևկուլս . . . | 10,00 | 13,70 | 19,35 | 35,36 | , |
| 3 | — | Ն. Ղանիջա . . . | 10,6 | 17,30 | 15,0 | 19,49 | աշ. ցորեն |
| 4 | — | Բողաքյասան | 7,97 | 10,00 | 11,57 | 13,80 | , |
| 5 | — | Վ. Ղանիջա . . . | 12,6 | 16,10 | 15,57 | 25,76 | , |
| 6 | Լենինական | — | — | 13,7 | 15,30 | 14,90 | 21,0 |
| 7 | — | Հոսոմ | 9,45 | 16,27 | 11,18 | 21,25 | գ. ցորեն |
| 8 | Լենինական | — | — | 13,34 | 15,51 | 14,87 | 17,74 |
| 9 | — | Հաջիղարս . . . | 7,84 | 18,51 | 7,98 | 19,40 | գ. գարի |
| 10 | — | Աղափարս . . . | 17,4 | 22,20 | 20,30 | 24,40 | |
| 10 | Գործի | Միջինը | 11,17 | 15,43 | 14,23 | 21,74 | |

Այս փորձերում աղոտը արվել է ցիանամիջի ձեփով - հեկտարին 60 կգ աղոտի հաշվով (3 ցենտ.), ֆոսֆորը արվել է առավերֆոսֆատի ձեփով 60 կգ-ի հաշվով (3,8 ցենտ.): Ինչպիս առանում ենք, աղոտի և ֆոսֆորի աղդեցությունը տարրեր են: Պարզ կերպով յերեփում են, վոր աղոտի և ֆոսֆատի կոմբինացիայի գեպքում բերքն ավելի յերարանում:

Պարաբանյութերի աղդեցությունը հայտաբաժիշտային կուլտուրաների վրա Արարատյան գաղտավայրում:

| Քյուղը | Բերքը մեկ հեկտարից ցենտներով | | | | Կուլտուրա |
|--------------------------|---------------------------------|-------|-------|------------------------|------------|
| | Զարա- գանց քած | Աղբա | Ֆունը | Աղբան փոփոխությունը | |
| 1. Վաղպատ | | | | | |
| 1. Յուվա | 12,5 | 13,14 | 17,3 | 19,35 | աշն. ցորեն |
| 2. Արտաշատ | 10,32 | 17,64 | 9,81 | 23,05 | , |
| 3. Նորագավիթ | 24,68 | 32,15 | 30,18 | 36,7 | , |
| 4. Ղուրդուզութ | 18,8 | 30,7 | 20,0 | — | , |
| 5. Հոկեմբերյան | 16,0 | 22,83 | 21,7 | 23,6 | , |
| 6. Վարժագիշար | 12,3 | 19,5 | 15,9 | 19,1 | , |
| 7. Թաղաղուղ | 17,3 | 21,59 | 20,46 | 25,30 | , |
| 8. Հաջիղար | 9,8 | 10,8 | 1,671 | 25,88 | , |
| | 15,21 | 21,04 | 18,37 | 24,71 | |

Այստեղ ես պարաբանյութերի աղդեցությունը հացահատիկային կուլտուրաների բերքի բարձրացման գործում մեծ են: Այս փորձերը պատկանում են 1928—30 թվերին, յերբ աղբանիքների կան համեմատած ներկայիս աղբոտեխնիկայի հետ յեզել են ցածր, իսկ ցածր աղբոտեխնիկայի գեպքում պարաբանյութերի աղդեցությունը լրիվ կերպով չի արտահայտվում:

Հետաքրքիր ե այստեղ բերել նաև նիտրագինով վարակած գիշայի աղդեցությունը հետևյալ տարրում ցանկող գարու և ցուրենի բերքի վրա:

| Քյուղը | 1937 թվին ցանկած կուլտուրա | 1936 թ. յե- ղել ե վիկա առանց վա- րակելու | 1936 թ. յե- ղել ե վիկա վարակած |
|------------------|---|---|---|
| | | Դարսերութագ | Աղնան ցորենի բերքը ցենտներով |
| Աղարակ | Գարու բերքը ցենտ- ներով | 15,0 | 17,0 |
| Աղնան | Աղնան ցորենի բերքը ցենտներով | 12,0 | 16,0 |

Հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու համար խոտարույների սերմերը նիտրագինով վարակելը նույնպես կարևոր տեղ է գրավում: Այս յերեսութը բացատրվում է նրանով, մոր նիտրագինի աղդեցության տակ շատ ավելի աղոտ և հուտակվել և մասնաւոր հողում տարրերը աղոտ և պահպանում են աղոտական նիտրագինի:

Սոցիալիստական դաշտերի ստախանութեականները բերքատվություն բարձրացման գործում ցույց տվին այն միջոցառութեան բարձրացման գեպքում ստացվում է մեծ քանակի բերք, որինակ՝ Դնեպրոբետրովսկի մարզի, Կրասնոարմենի ուսունի «Պրոզրես» կողմութիւ բրիգադիր ընկ. Բրատև Ա. Յ. 1936 թ. 5 հեկտար հողամատի յուրաքանչյուր հեկտարից ստացած 52,5 ցենտներ ցորեն, իսկ 1937 թ. նա, պահպանելով մյուս աղբուծեանարկումների կերպում, միևնույն ժամանակ հողն և մուցրել (ցելի տակ) 15 տոն լավ գորակի գոմաղբ, վորը գաշտում ցրելուց հետո անմիջապես վարել. ե: Ի հարկե այդ բարձր բերքը չի կարելի միայն վերադրել գոմաղբին, այլ գորդյունը և բարձր աղբոտեխնիկայի և պարաբանյութերի աղդեցությունը պահպանության: Աղովոչերնումութակի մարզի Սչերբենսկի շրջանի

«Հոկտեմբերի 14 տարին» կոլխոզի բրիգադիր վ. Յե. Կիմլաչիյը 78 հեկտարի վրա յուրաքանչյուր հեկտարից ստացավ 55 ցենտ. ցորեն, Յեպորսկի Մ. Աւ. կատարելով ցանքսը սեվ ցելի վրա—ստացավ 80 ցենտներ ցորեն սեկ հեկտարից:

Հացահատիկային կուլտուրաների բարձր բերք ստացվել է նաև Հայաստանում կոլխոզ առաջավորների կողմից—որինակ՝ 1938 թ. Սպիտակի շրջանի, Պարնի գյուղի կոլխոզում ընկ. Գառոյան Յե. 8,5 հեկտարից ստացել է աշնան ցորենի միջին բերք 35,9 ցենտ. յուրաքանչյուր հեկտարից. Արթիկի շրջանի Պարնի գյուղի կոլխոզում ընկ. Յե. Գիլոյանը 8 հեկտարի վրա յուրաքանչյուր հեկտարից ստացել է 35 ցենտ. ցորեն (Ուկրաինկա). Ղափանի շրջանի Զեյվագյուղի կոլխոզում ընկ. Ս. Հովհաննիսյանը 10 հեկտարի վրա յուրաքանչյուր հեկտարից ստացել է 30 ցենտ. գարնանացան գարի. Ստախանովականների փորձերից ուրիշ բաղմաթիվ որինակներ կարելի յերերք, վորոնցով պարզ յերեվում ե, վոր բարձր բերք ստանալու ամենաիմնական նախապայմաններն են ճիշտ ցանքաշրջանառությունը, լավ և ժամանակին հողի մշակումը, ճիշտ պարարտացումը, սնուցումը և բերքատու տեսակավոր սերմի ցանքսը:

1938 թ. Նախկին քիմիացման և ազրոհողագիտական կայանի կողմից կատարված փորձերի արդյունքները նույնպես ցույց են տալիս հացահատիկային կուլտուրաների բերքատվության զգալի բարձրացումը Հայաստանում, որինակ՝ գարնան գարու փորձը, վորը գրվել եր մեր կողմից Դյուզքենդ գյուղի ընկ. Միկոյանի անվան կոլխոզում (№ 1 բրիգադում) չպարարտացված հողամասից ստացվեց 12 ցենտներ, իսկ հանքային պարարտանյութերով՝ մինչև 29,9 ցենտներ. մանրամասնությունները տես աղյուսակում.

| Փորձի սինման | Մեկ հեկտ. ցենտներով | Ծանոթություն |
|--|------------------------|--|
| 1. Առանց պարարտացման | 12,4 | |
| 2. Սուլֆ. ամմոնիում 3,7 ցենտ. և սուլֆեր փոսփատ 4,1 ցենտ. | 26,7 | 18 0/-ի Սուլփերփոսփատ Ամմոնիում սուլֆատ |
| 3. Սուլֆ. ամմոնիում 3,7 ցենտ. և սուլփերփոսփատ 6,1 ցենտ. | 29,9 | 20 0/-ի |
| 4. Սուլֆատ ամմոնիում 5 ցենտ. և սուլփերփոսփատ 4,1 ցենտ. | 24,8 | Կարբոնատային սեմանտ, նախորդ կուլտուրայում յեղել և կաղամբ: |
| 5. Սուլֆատ ամմոնիում 5 ցենտ. և սուլփերփոսփատ 6,1 ցենտ. | 24,9 | |

Քիմիական անալիզները ցույց են տալիս, վեր բայց բերքի բարձրացումից, ավելանում է նաև պատճեն մեջ. Այս թվերը ցույց են տալիս, վոր պարարտացման դեպքում պետք և անպայման հաշվի առնել նաև սննդարար նյութերի փոխարարերությունն այն պարարտանյութերի մեջ, վորոնք մացվում են տվյալ կուլտուրայի տակ: Նույն կոլխոզի մի այլ փորձում (նույնպես ջրովի հողի վրա) առանց պարարտացման գարու բերքը ստացվել է 22,8 ցենտ. մեկ հեկտարից, ազգուով ու ֆոսֆատով՝ 28,0 ցենտներ, իսկ ազոս, ֆոսֆատ և կալիում միասին տալու դեպքում, ստացվել է 38 ցենտներ: Հողը յեղել և թեթեվ կարբոնատային, շաղանակագույն—սև հող: Զանգիբառասրի շրջանում թաղագյուղի կոլխոզում գարնան գարու փորձը պարարտանյութերի հետ տվյալ ենթայալ պատկերը (փորձը գրգել է նույն կայանի աշխատակից Ս. Արեգակատյանի կողմից).

| Փորձի սինման ցենտներով | Փորձ № 1 | | |
|---|------------|------------|------------|
| | ցենտ/հեկտ. | ցենտ/հեկտ. | ցենտ/հեկտ. |
| 1. Առանց պարարտացման | 6,6 | 18,7 | 9,73 |
| 2. 40 0/-ի կալիումական աղ 2 ցենտ. | 8,2 | 20,0 | 8,3 |
| 3. Ամմ. սուլֆ. 7,5 ցենտ., սուլփերփոսփ. 8,3 ցենտ. | 27,7 | 32,84 | 22,76 |
| 4. Ամմ. սուլֆ. 7,5 ցենտ., սուլփերփոսփ. 8,3 ցենտ., կալիում. աղ 1,0 ցենտ. | 40,0 | 36,7 | 31,0 |
| 5. Ամմ. սուլֆ. 7,5 ցենտ., սուլփերփոսփ. 8,3 ցենտ. կալիում. աղ 2,0 ցենտ. | 27,8 | 38,38 | 23,0 |

Ինչպես տեսնում ենք, պարարտանյութերից հակայական չափով բերքն ավելանում է. կալիումական պարարտանյութը նույնպես բարձրացնում է զգալի չափով գարու բերքը: Բնդի հանրապես կալիումական պարարտանյութերը պետք և տալ աղյուսական և ֆոսֆորական պարարտանյութերի հետ միասին: Միենային ժամանակ տեսնում ենք, վոր կալիումի դոզան բարձրացնելու դեպքում յերկու հողում բերքն իջել է, իսկ մի հողում՝ ավելացել:

Այս թվերը ցույց են տալիս, վոր պարարտանյութն ամեն դեպքում չե վոր բարձր արդյունք և տալիս, ուստի անհրաժեշտ է, վոր խրճիթ լարարատորիայի վարիչները պարարտացման փորձերի միջոցով պարզեն՝ թե իրենց կոլտնտեսության հողերում վորքան պետք ե տալ պարարտանյութեր և միենույն ժամանակ պարզեն՝ թե պարարտանյութերն ինչ հարաբերությամբ պետք ե գործածել: Այդ փորձերը հնարավորություն կտան կուտանտեսության ավելի խնամքով և ուստի անդեպ ուղարկութելու պարարտանյութերը: Միևնույն ժամանակ կալարզվի թե յուրաքանչյուր կուլտուրան, հողային պայմաններից յելնելով, ինչպես պետք ե պարարտացնել:

Այստեղ կրերենք նաև Գյուղատնտեսական ինստիտուտի ազգային ինստիտուտի ամբիոնի վարչի ընկ. Յե. Մովիսյանի կողմից նույն ինստիտուտի հողամասում բենգալեզե սորտ ցորենի վրա կատարած փորձերի արդյունքները 1938 թվին:

Ընկ. Յե. Մովիսյանն առանց պարարտացման ստացել է 9,5 ցենտներ մել հեկտարից, տարով ազոտական և ֆոսֆորական պարարտանյութեր, ստացել ե 27 ցենտ., իսկ ազոտական և ֆոսֆորական պարարտանյութերի հետ միասին կալիումական պարարտանյութ ավելացնելու գեպքում, ստացել ե 35,5 ցենտներ:

Այս բոլոր փորձերն ել առում են այն մասին, վոր կալիումական պարարտանյութերի ճիշտ սկավործումը զգալի չափով բարձրացնում ե բերքատվությունը: Մեկ-յերկու տարի առաջ աարածված եր այն կարծիքը, վոր կալիումական պարարտանյութերն եփելու չեն տալիս. այդ կարճիքն, ինչպես տեսնում ենք, իրականությանը չի համապատասխանում: Անհրաժեշտ է կալիումական պարարտանյութերի ճիշտ սկավործում պայմաններն ուսումնասիրել, իսկ զբա համար խրճիթ լարութանորիաների գծով պետք ե դնել մասսայական փորձեր՝ տարբեր հողամասերի վրա:

Ինչպես ցույց են տալիս ստախանովականների բաղմաթիվ փորձերը, ոնուցումը նույնպես շատ կարեոր և անհրաժեշտ միջոցառում ե բերքատվության բարձրացման գործում: Սնուցանելու ժամանակ պետք ե միշտ ել ի նկատի ունենալ հողը ջրով ապահոված լինելը, վորի գեպքում հացահատիկային կուլտուրաներին կարելի յե տալ ոնուցում 1—2—անգամ վաղ գարնանը՝ թփակալման շրջանում և խողովակարման ժամանակ: Խողովակալումից հետո տված ոնուցման արդյունքը քիչ ե լինում:

Պարարտանյութը կարելի յե տալ ինչպես չոր վիճակում, նույնպես և ջրում լուծված վիճակում: Սնուցման համար առաջին հերթին պետք ե ընտրել լավ լուծվող պարարտանյութերը, տեղական պարարտանյութերից՝ մոխիրը, իսկ վաղ գարնանը կարելի յե գործածել նաև թոչնաղը, ժիժան և այլն:

Անջրդի պայմաններում պետք ե աշխատել, վորպեսզի սնուցումը տրվի վաղ գարնանը. ուշ տրված սնուցումը բերքն ավելի քիչ չափով ե բարձրացնում, քանի վոր անջրդի պայմաններում և անձրեխների բացակայության ժամանակ ուշացրած սնուցման նյութերը չեն լուծվի և արմատներին չեն հասնի:



ՊԱՐԱՐՏԱՆՑՈՒԹ ԽԱՌԵԼՈՒ ԿԱՆՈՆԸ (ՍԻԵՄԱ)


Յ Ա Ն Կ

Եջ

| | |
|---|----|
| Ներածական | 3 |
| I. Բույսի սննդասությունը | 4 |
| II. Տեղական պարաբռանյութեր | 8 |
| III. Կոմպոստ | 16 |
| IV. Մոխիր | 17 |
| V. Հանքային պարաբռանյութեր | 18 |
| VI. Պարաբռանյութերի պահպանումը | 28 |
| VII. Հանքային պարաբռանյութերի ճանաչելը | 29 |
| VIII. Պարաբռանյութերից խառնուրդ պատրաստելը | 32 |
| IX. Պարաբռանյութերի աղբեցությունը հացահատիկային կուլտուրաների բերքատվության վրա | 34 |

1. Կալցիումական սելիտրա
2. Նատրոնական »
3. Լինա »
4. Կալի ամոնիական »
5. Ամմոնիում սուլֆատ
6. Ամմոնիում քլոր
7. Միզանյութ
8. Ցիանամիդ կալցիում
9. Գրեցիոլիտատ
10. Սուլֆէրֆուֆատ
11. Բուժաս շակ, տերմոֆուֆատ
12. Առուֆատ կալի և սուլֆ, կալի մազնի
13. 50%—ի կալիումական աղ
14. 20—40% կալիումական աղ
15. Կրոքար, կալիճ—CaCO3

Կալցիումական սելիտրա
Նատրոնական սելիտրա
Լինա սելիտրա
Կալի-ամոնիական սելիտրա
Ամմոնիում սուլֆատ
Ամմոնիում քլոր
Միզանյութ
Ցիանամիդ կալցիում
Գրեցիոլիտ
Սուլֆէրֆատ
Չրեցիումատ
Սուլֆէրֆուֆատ
Բուժաս շակ, տերմոֆուֆատ
Առուֆատ կալի և սուլֆատ կալի և մազ
50%—ի կալիումական աղ
20—40% կալիումական աղ
Կրոքար կալիճ—CaCO3



Պատ. խմբագիր՝ Յե. Մովսիսյան
Լեզվական խմբագիր՝ Բ. Մամյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ռհանյան
Երբագրիչ՝ Ա. Արդաքանյան

Քլավլիսի լիազոր՝ Զ—1061 Հըմատ. № 5095.

Պատվեր 879. Տիրաժ 2000.

Փուղթ 62×94. Տպագր. 2 $\frac{3}{4}$ մամ.


Մեկ մամ. 38400 նշան.

Հանձնված և արտադրության 8 գեկանմբերի 1030 թ.

Ստորագրված և տպագրության համար 15 հունվարի 1040 թ.

Հայոց տէրատի 1 տպարան, Յերևան, Լենինի, 65.

ՀՀ Ազգային գրադարան



NL0282546

17.321

ԳԻՆԸ 80 ԿՈՊ.

97 67-

Г. Ш. АСЛАНЯН
Удобрения и удобрение
хлебных злаков
Арменгия. Ереван, 1910 г.

(ՀԽԱԾ ՀԺԿ Հացահատիկային Վարչության
դաշտավարական կայան)